# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

32ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 03 (1553) ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՈՒԱՐ 4, 2012
VOLUME 32, NO. 03 (1553) SATURDAY, FEBRUARY 4, 2012

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## ՓՐՈՖ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

**ՏՕՔԹ Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Փրոֆ Գէորգ Խրլոպեանի անժամանակ մահով հայ արդի պատմագրութիւնը կրեց մեծ կորուստ: Արդարեւ, իր ապաժամ մահով ետին թողած իր հոգեմտաւոր անփոփելի բացը մնաց միշտ բաց, ինչպէս կը պատահի մեծերու պարագային: Զանոնք փոխարինողներ համարեա չկան: Նմանապէս, իր հարազատներուն, գործակիցներուն, բարեկամներուն՝ իր մահուան պատճառած ցաւը մնաց ցաւ, ինչ որ արտայայտութիւն կը գտնէ ներկայ տողերու մէջ, որոնք ծօնուած են իր յիշատակին մահուան երկրորդ տարելիցին տխուր առիթով:

Մեծ էր «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական կազմի անդամ եւ մշտատեւ աշխատակից, մեր սիրելի Փրոֆեսորը իր ամբարած ուսումնական լայն պաշարով: Մեծ էր ան, անխտրական եւ առանց ակնկալութեան հայ մամուլին իր բերած յանախակի աշխատակցութիւններով: Մեծ էր ան, հրապարակային ձեռնարկներուն տուած իր պեղումներով հարուստ նորարար դասախօսութիւններով: Մեծ էր ան, իրեն տրուած անձնական այցելութիւնները, ընկերական պատահական հանդիպումները, անգամ գլուխ-գլխի պարզ հաղորդակցութիւնները՝ հայ մարդու առօրեան տագնապեցնող ազգային, պահանջատիրական եւ հայրենական հարցերու կամովին վերլուծելու, լուսաբանելու եւ մեկնաբանելու պատեհ առիթներու վերածելով:

Փրոֆ Գէորգ Խրլոպեան համակ նուիրում էր իր ազգին, հայրենիքին, հայ մշակոյթին եւ հայ ժողովուրդի պահանջատիրական պայքարին: Այդ բոլորի հետ եւ անոնցմէ վեր, ան իր ուսումնասիրական հետազօտութիւններով նոր մղում տուաւ մեր արդի պատմութեան գիտական մշակումին: Ան, հաստատեց արդի հայ փիլիսոփայութեան հետազօտման ամբիոն: Զարկ տուաւ հայագիտական նոր ոլորտներու ըմբռնումներու սահմանումին: Ծառացաւ մեր ազգային, ընկերային եւ աստուածաբանական մտքի քննարկման վրայ: Հաստատեց ազգային Կիրառական ընկերաբանութիւնը: Հուսկ ապա, յայտնաբերեց 1915 ին, հայոց դէմ գործադրուած Ցեղասպանութեան ծանօթ շատ մը պատճառներու թւումներու շարքին՝ բնութագրեց Ցեղասպանութեան գիտականօրէն ուսումնասիրուած որոշակի նորարար դրդապատճառներ: Համառօտակի թուենք մի քանին՝ ինչպէս, կրօնական, պետական,

Շար.ը էջ 18

## ՍԱՐՔՈԶԻ ՍՊԱՌՆԱՑԱԾ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՈՒՂԱՐԿԵԼ ՆԱԵՒ ՀՈԼՈՔՈՍԹԻ ԺԽՏՈՒՄԸ ՔՐԷԱԿԱՆԱՑՆՈՂ ՕՐԷՆՔԸ

*Ֆրանսիայի նախագահ Նիքոլա Սարքոզի իր դժգոհութիւնը յայտնած է, Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրէնքի Սահմանադրական Դատարան ուղարկելու քայլին վերաբերեալ:*

*Ֆրանսայի նախագահ «Լը Մոնտ» թերթին ըսած է, որ եթէ օրինագիծը դադարեցուի, ապա ինք Սահմանադրական Դատարան կ'ուղարկէ նաեւ Հոլոքոսթի ժխտումը քրէականացնող օրէնքը:*

*Ֆրանսայի կողմէ ճանչցուած ցեղասպանութիւններու ժխտումը քրէականացնող օրինագիծը ընդունուած էր Յունուար 23-ին, 127՝ կողմ, 86՝ դէմ ձայներու յարաբերակցութեամբ: Ֆրանսական կառավարութիւնը մինչեւ այսօր պետականօրէն ճանչցած է միայն Հոլոքոսթն ու Հայոց Ցեղասպանութիւնը եւ քանի որ Հոլոքոսթի ժխտումը արդէն քրէականացուած է, ընդունուած օրինագիծը փաստօրէն պիտի վերաբերի Հայոց Ցեղասպանութեան:*



**Ֆրանսիայի նախագահ Նիքոլա Սարքոզի**

*Ֆրանսայի Ծերակոյտէն ներս հաւաքուած է անհրաժեշտ թիւով ձայներ, Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագիծը երկրի սահմանադրութեան համապատասխանութիւնը ստուգելու համար: Անհրաժեշտ 60-ի փոխարէն, օրինագիծի հակառակորդները հաւաքած են աւելի քան 70 ծերակոյտի ստորագրութիւն:*

*Սահմանադրական դատարանը պէտք է մէկ ամսուայ ընթացքին ստուգէ օրէնքի համապատասխանութիւնը Ֆրանսայի Սահմանադրութեան եւ որոշում կայացնէ:*

*Օրինագիծին դէմ եղող Կեդրոնամէտ աջ խումբի պատգամաւոր Նաթալի Կուլէ ըսած է, թէ շատ ուրախ է: «Օրինագիծը սխալ էր եւ սխալը Ծերակոյտէն եւ Ազգային Ժողովէն վերադարձաւ: Ֆրանսացի խորհրդարանականներուն քաջ ըլլալը ցոյց տուինք»,- ըսած է ան:*

*Պաշտօնական Անգարան ողջունած է Ցեղասպանութիւններու ժխտումը քրէականացնող օրինագիծի սահմանադրականութիւնը վիճարկելու նպատակով Սահմանադրական Դատարան դիմելու ֆրանսացի ծերակուտականներու որոշումը:*

*«Բազմադարեայ ժողովրդավարական աւանդոյթներ ունեցող երկրի խորհրդարանականները ճիշդ քայլ կատարեցին՝ ի պաշտպանութիւն իրենց արժէքներուն»,- ըսած է Թուրքիոյ Նախագահ Ապտիւլա Կիւլ:*

*Թուրքիոյ վարչապետ Ռեճէփ Թայիփ Էրտողան ըսած է, թէ ֆրանսացի ծերակուտականները Ֆրանսայի ժողովրդավարական աւանդոյթներուն համապատասխանող քայլ ձեռնարկած են:*

*Պաշտօնական Անգարան այժմ կը յայտարարէ, թէ կը սպասէ վերոնշեալ օրինագիծի շուրջ զարգացումներուն եւ համապատասխան քայլեր պիտի ձեռնարկէ վերջնական որոշումէն ետք:*

## ՀԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԶԳԵԼՈՒ ԿՈՂՄՆԱԿԻՑ Է

*Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Հիլըրի Քլինթըն, մեկնաբանելով Ֆրանսայի Խորհրդարանի երկու պալատներուն կողմէ Հայոց Ցեղասպանութեան ժխտման համար քրէական պատիժ սահմանող օրինագիծի ընդունումը, յայտնած է որ ցեղասպանութեան հարցը պէտք է ձգել պատմաբաններուն:*

*«Ասոսիէյթըտ Փրէս» լրատուական գործակալութեան համաձայն, երբ հարց տրուած է, թէ ինչու Միացեալ Նահանգները չի հետեւիր Ֆրանսայի օրինակին, Տիկին Քլինթըն ըսած է, որ ամերիկեան վարչակազմը միշտ զգոյշ է խօսքի ազատութեան վնաս չհասցնելու եւ այդ հարցը պէտք է ձգել գիտնականներուն:*

*«Պատմական հարցերը լուծելու համար կառավարութեան ուժը օգտագործել փորձելը, կը կարծեմ, դուռ կը բանայ, որմէ անցնիլը շատ վտանգաւոր է», - ըսած է Քլինթընը Պետական Գրասենեակի աշխատակիցներու մասնակցութեամբ տեղի ունեցած միջոցառման մը ժամանակ:*

*Քլինթընի կարծիքով, հարցը պէտք է քննարկուի, բայց՝ ոչ թէ լուծուի կառավարութիւններու կողմէ:*

*«Մենք պէտք է քաջալերենք իւրաքանչիւրին՝ պատմական որեւէ բանավէճի կողմերուն, մտնել գաղափարներու փոխանակման ասպարէզ», - ըսած է Քլինթըն, աւելցնելով. - «Հաւաքեցէք ձեր ապացոյցները, ներկայացուցէք ձեր փաստերը եւ պատրաստ եղէք մասնակցելու բանավէճին»:*



**Պետական քարտուղար Հիլըրի Քլին**

*Հիլըրի Քլինթընի այս խօսքերէն ետք Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմեթ Տաւութօղլու հեռախօսազրոյց ունեցած է ԱՄՆ պետական քարտուղարին հետ եւ շնորհակալութիւն յայտնած՝ Ֆրանսայի Ծերակոյտին կողմէ ցեղասպանութիւններու ժխտումը քրէականացնող օրինագիծը քննադատելուն համար:*

## ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ՝ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԷՋ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

*Հայաստանի Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովը (ԿԸՅ) որոշում կայացուցած է, որու համաձայն Հայաստանի Հանրապետութեան այն քաղաքացիները, որոնք կ'աշխատին ու կ'ապրին արտասահմանի մէջ, այսուհետեւ պիտի կարողանան Հայաստանի խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններու ժամանակ քուէարկել նաեւ էլեկտրոնային եղանակով՝ այցելելով Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի ինթըրնեթային կայքէջը:*

*Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի նախկին անդամ եւ ընդդիմադիր Հայ Ազգային Գոնկրէսի ներկայացուցիչ Զոյա Թադեւոսեան այս կապակցութեամբ կարծիք յայտնած է, թէ էլեկտրոնային համակարգը նոյնպէս կրնայ օգտագործուիլ ընտրակեղծիքներու համար:*

*«Հնարաւոր է մի այնպիսի ցուցակ ներկայացնել, որ, ենթադրենք 15 հազար մարդ են ապրում եւ աշխատում այդ երկրում: Եւ կը բացատրեն դա շատ հիմնաւոր կերպով: Ես կարծում եմ, որ եթէ մինչ այժմ նման գործելաոճ չկար, այս պահին դա անակնկալ որպէս մատուցել հանրութեանը, սխալ է»,*

Շար.ը էջ 4

# ՔՈՉԱՐԵԱՆԻ ԹԻՐԱԽԸ 18-Ն Է

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանը, փաստացի հաստատելով ԲՀԿ համամասնական ընտրացուցակում տեղ ունենալու հանգամանքը, փաստացի վկայում է այն մասին, որ Բարգաւաճ Հայաստանի գործողութիւնները պայմանաւորուած չեն միայն Գագիկ Ծառուկեանի տնտեսա-քաղաքական շահով:*

*Վարդան Օսկանեանի առկայութիւնը վկայում է այն մասին, որ ի դէմս ԲՀԿ-ի, որոշակիօրէն ձեւաւորւում է Ռոբերտ Քոչարեանի ճամբար: Ի դէպ, այդ առումով հետաքրքրական է նաեւ այն, որ ՄԱԿ կուսակցութեան նախագահ Գուրգէն Արսէնեանն էլ Ազատութիւն ռատիոկայանին յայտնել էր, թէ չի բացառւում, որ ինքը ներգրաւուի ԲՀԿ համամասնական ցուցակում: Իսկ Գուրգէն Արսէնեանն այն գործիչն է, ով Ռոբերտ Քոչարեանի պաշտօնաթողութիւնից կարճ ժամանակ անց յայտարարեց, որ Քոչարեանի ժամանակ խաղի կանոնները յստակ էին, իսկ Սարգսեանի պարագայում անորոշութիւն է: Արսէնեանն իհարկէ չշարունակեց հետեւողական ընդդիմութիւն դառնալ Սարգսեանին, այլ այդպիսին եղաւ միայն Տիգրան Սարգսեանի հանդէպ: Բայց, ըստ երեւոյթին, Սերժ Սարգսեանն այդպէս էլ չգնահատեց եւ իր քաղաքական սցենարներում տեղ չտուեց Արսէնեանին, ինչն էլ ՄԱԿ նախագահին մղում է այլ քաղաքական կոնֆիգուրացիայի նախընտրութեան:*

*Սակայն, թէ Վարդան Օսկանեանի, թէ Գուրգէն Արսէնեանի յայտարարութիւններն ամենեւին չեն կարող աներկբայ նշանակել, որ ԲՀԿ-ն վերածւում է քոչարեանական «կոալիցիայի» հանգրուանի:*

*Ի վերջոյ, այդ զարգացումները աւելի շատ վկայում են այն մասին, որ ԲՀԿ ուղղութեամբ կայ քոչարեանական ճնշում, կուսակցութիւնն այդպիսի «կոալիցիայի» վերածելու համար, ինչին Գագիկ Ծառուկեանն այդուհանդերձ որոշակիօրէն դիմադրում է:*

*Միւս կողմից, հարց է առաջանում իհարկէ, թէ ինչու պէտք է Ծառուկեանը դիմադրի այդպիսի կոալիցիա լինելուն, եթէ միւս կողմից նրան կարծես թէ անխնայ սկսել է «հալածել» Սերժ Սարգսեանը: Ընդ որում, աներկբայ է, որ Սարգսեանը նրան «հալածելու» է՝ անկախ Քոչարեանի ծրագրերից:*

*ԲՀԿ-ն ինքնին, որպէս իշխանութեան մէջ գտնուող հսկայական ռեսուրսով կառոյց, վտանգ է Սերժ Սարգսեանի համար, եթէ չկան աներկբայ երաշխիքներ, որ այդ կուսակցութիւնը անվերապահ ենթակայ է Սարգսեանին: Եթէ չկան այդպիսի երաշխիքներ, ապա ԲՀԿ-ն կարող է ցանկացած պահի «ընկնել» ազդեցութեան տակ, Սարգսեանին դնելով փաստի առաջ:*

*Իսկ երբ խօսքն իշխանութեան ձեւաւորման կարեւոր փուլի մասին է, ապա այդօրինակ իշխանական սեգմենտ ունենալը, որը զգալիօրէն անվերահսկելի է, Սերժ Սարգսեանի համար դառնում է ռազմավարական վտանգ, ինչը նա պէտք է յաղթահարի:*

*Հարց կարող է առաջանալ, թէ այդ դէպքում ինչու ԲՀԿ նախագահը իր հաւատարմութիւնը չի յայտնում Սերժ Սարգսեանին, եւ փակում թեման: Այստեղ կայ մի քանի էական հանգամանք: Նախ, լինելով խոշոր սեփականատէր, Գագիկ Ծառուկեանն անշուշտ լաւ է պատկերացնում, որ իշխանութեան ձեւաւորումը նշանակում է սեփականութեան վերաբաշխում: Իսկ Սերժ Սարգսեանը իշխանութիւն է ձեւաւորում՝ իր իշխանութիւնը: Իսկ քանի որ Ծառուկեանը երբեք էլ չի համարուել Սարգսեանի թիմի մարդ, բնական է, որ առաջին թիրախներից մէկը պէտք է դառնայ նրա սեփականութիւնը, որպէս թէ առաւել խոշոր, թէ առաւել «օտար»:*

*Միւս հանգամանքն այն է, որ Սերժ Սարգսեանին հաւատարմութիւն յայտնելուն կարող է խանգարել հաւատարմութիւնը Ռոբերտ Քոչարեանի հանդէպ: Եթէ նոյնիսկ Քոչարեանն ուղղակիօրէն չի յորդորում Ծառուկեանին չտալ այդ հաւատարմութեան երդումը, ապա ամենեւին չի բացառւում, որ նա Ծառուկեանին անուղղակիօրէն ակնարկում է, որ դա իրեն դուր չի գայ: Իսկ ԲՀԿ առաջնորդը բնականաբար չի անի մի բան, որը դուր չի գա իր անձնական բարեկամ Ռոբերտ Քոչարեանին:*

*Այլ կերպ ասած, Ծառուկեանը քաղաքականութեան մէջ ինչ որ տեղ նաեւ պատանդ է իր եւ Քոչարեանի անձնական ջերմ եւ սերտ փոխյարաբերութեանը, ինչը նրան խանգարում է լիովին անկաշկանդ լինել Սերժ Սարգսեանի հետ պայմանաւորուածութիւններում:*

*Իսկ Քոչարեանին դա բնականաբար կարող է օգնել առանց Սերժ Սարգսեանի հետ ուղղակի դիմակայութեան, նրա համար ստեղծել բաւականաչափ ներիշխանական խնդիրներ, այդպիսով պահելով իր ազդեցութիւնը համակարգում:*

*Ամբողջ հարցն այն է, թէ արդեօք Սերժ Սարգսեանը փորձում է ինքնուրոյն գտնել այդ խնդիրների լուծումը, թէ դիմում է Քոչարեանի օգնութեանը:*

*Դատելով ներկայիս իրավիճակից, Սարգսեանը Քոչարեանի օգնութեանը կամ չի դիմում, կամ աւելի ու աւելի քիչ է դիմում, ինչն էլ երկրորդ նախագահին գուցէ ստիպում է աւելի ու աւելի բացել իր նախընտրական մտադրութիւնները:*

*Քոչարեանի ամենահաւատարիմ զինակիցներից մէկը համարուող Վարդան Օսկանեանի բաւական բաց տեքստով յայտարարութիւնը կարծես թէ դրա օրինակներից մէկն է: «Այս պահին ես դեռ որոշում չեմ ընդունել եւ կարծում եմ, որ վերջնական որոշման համար դեռ ժամանակ կայ: Սակայն բացառուած չէ, որ ներքաղաքական գործընթացներն ինձ ստիպեն, որ արագացնեմ որոշումս», ասում է Վարդան Օսկանեանը:*

*ԲՀԿ ցուցակում ներգրաւուելու հաւանականութեան մասին նախկին արտգործնախարարի գրեթէ հաստատող յայտարարութիւնը կարծես թէ ուղղուած է Սերժ Սարգսեանին, յատկապէս երբ շեշտւում է ԲՀԿ վրայ «քաղաքական դրդապատճառներով» ճնշումների մասին: Սարգսեանին կարծես թէ զգուշացւում է, որ եթէ ԲՀԿ վրայ ճնշումները չդադարեն, ապա Քոչարեանը կարող է ակտիւօրէն մտնել խաղի մէջ:*

*Ի վերջոյ, յիշենք, որ ամիսներ*

*Շար.ը էջ 18*

# ՇԱԽՄԱՏԻՍՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ԿԱՄ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ ՍԿՍՈՒԱԾ Է

*ԱՐՄԷՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ*

*Մայիսին կայանալիք Ազգային Ժողովի ընտրութիւններն այնքան էլ նոր ԱԺ ձեւավորելու խնդիր չեն լուծելու: Այն պատասխանելու է ընդամէնը մէկ հարցի. կը յաջողուի՞ գործող նախագահին խորհրդարանում ունենալ բացարձակ մեծամասնութիւն, թէ՝ ոչ:*

*Եւ քանի որ Սերժ Սարգսեանը հիմա ընդամէնը մէկ քաղաքական ուժի՝ ՀՀԿ-ի կողմից է լիարժէք վստահութիւն ու աջակցութիւն վայելում, հենց նրա որակեալ մեծամասնութիւնը ձեւաւորելու խնդիրն է դրուած:*

*Այս իմաստով խորհրդարանական ընտրութիւնները նոյնիսկ կարելի է 2013-ին կայանալիք նախագահական ընտրութիւնների առաջի փուլը համարել: Որովհետեւ եթէ նա չկարողանայ խորհրդարանում մեծամասնութիւն ձեւաւորել, կորցնելու է գործընթացները վերահսկելու քաղաքական եւ վարչական լուրջ ռեսուրսներ:*

*Իշխանութիւնը պահելու համար ստիպուած է լինելու նոր կոալիցիա ձեւաւորել իր շուրջը՝ ոլորտների ու պորտֆելների վերաբաշխման ժամանակ շատ աւելի լուրջ զիջումների գնալու հաշուին: Քաղաքական այլ ուժերից նաեւ իր վերընտրութիւնը երաշխաւորող այլ՝ քրէաօլիգարխիկ շրջանակներից նրա կախուածութիւնն զգալիօրէն մեծանալու է: Դա է պատճառը, որ նա չի ուզում կորցնել ընտրութիւնների մաժորիտար համակարգը, որը դրուած խնդիրը լուծելու ամենակարեւոր գործիքն է:*

*Բայց քաղաքական դաշտում առկայ ուժերի ներկայիս յարաբերակցութիւնը եւ գործընթացների ընդհանուր միտումները ցոյց են տալիս, որ ընտրութեան առաջին փուլն իր համար շահեկան տարբերակով լուծելու հարցն այնքան էլ անիրականանալի չէ: Դրա համար առկա է արտաքին եւ ներքին երկու հիմնական նախադրեալ:*

*1. Ի տարբերութիւն նախորդ համապետական ընտրութիւնների՝ այս անգամ գործընթացում վիրտուալ, աներեւոյթ ներգրաւուածութիւն ունեն նախկին երկու նախագահները: Խօսքը, իհարկէ, ոչ թէ անմիջական ներգրաւուածութեան մասին է, այլ նրանց տեսակի, աշխարհայեացքի, կառավարման նրանց մոդելների եւ դրանք այս կամ այն կերպ, այս կամ այն չափով պաշտպանող հասարակական, քաղաքական շրջանակների: Մեծ հաշուով, թէ խորհրդարանական եւ թէ նախագահական ընտրութիւններում որոշուելու է, թէ արդէն ծանօթ այս երեք ուղղութիւններից որով է ընթանալու Հայաստանը:*

*Նրանցից ոչ մէկի պարագայում էլ բաւարար որոշակիութիւն չկայ: Նրանցից իւրաքանչիւրի դէպքում էլ հսկայական թերութիւնների հետ գործ ունենք, եւ այս առումով սա լինելու է ընտրութիւն ոչ թէ լաւ ու վատի միջեւ, այլ վատերի՝ յանուն չարեաց փոքրագոյնը գտնելու: Բայց խնդիրը տուեալ դէպքում դա չէ: Այլ այն, որ գործող նախագահը մրցակցելու է երկու այնպիսի առանցքների հետ, որոնք աւելի շատ անհանդուրժող են միմեանց նկատմամբ, քան իր: Եւ սա իրական փրկութեան եւ յաղթանակի խաղաթուղթ է, որը անցած 5 տարիներին ձեռք է բերուել ներքաղաքական չափազանց նուրբ այն քաղաքական ուղեգծի շնորհիւ, որ վարել է գործող նախագահը:*

*Մի կողմից նա բաւարար չափով տարանջատուեց նախկին նախագահ Քոչարեանից, միւս կողմից՝ բաւարար չափով մօտեցաւ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին՝ օգտագործելով այսպէս կոչուած քաղաքակիրթ երկխօսութեան մեթոդոլոգիան եւ նրանցից վերցնելով արտաքին քաղաքական հիմնական շեշտադրումներն ու վեկտորները: Արդիւնքում աննկատ ստեղծուեց այնպիսի իրավիճակ, երբ այդ երկու փոխբացառող կողմերի համար էլ Սերժ Սարգսեանը, իբրեւ մրցակից, դարձաւ առաւել ընդունելի տարբերակ: Օգտագործելով նրանց թշնամութիւնը՝ Սերժ Սարգսեանը կարողացաւ պահել բալանսը եւ հաւասարապէս վերահսկելի դարձնել թե մեկ թե միւս կողմի գործողութիւնները:*

*Սա հնարաւորութիւն չի տալիս ձեւաւորել միասնական ընդդիմադիր բեւեռ, որն ընկալուելու էր իբրեւ իշխանութիւնների այլընտրանք: Որովհետեւ առաջին երկու նախագահների տեսակը, արժէքները պաշտպանող քաղաքական շրջանակները հանրապետականի դէմ պայքարելուց զատ կամ առաջ նախ իրար դէմ են պայքարում, եւ սա չի թողնում անգամ միասնական մօ-*

*Շար.ը էջ 18*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆ

# «ՀՀԿ-ԻՆ ՊԱՅԹԵՑՆԵԼԸ ՎՏԱՆԳԱՒՈՐ Է».- ԷԴՈՒԱՐԴ ՇԱՐՄԱԶԱՆՈՎ


ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը

«Հանրապետական» կուսակցութիւնը պահել է կոռեկտութիւնը կոալիցիոն գործընկեր «Բարգաւաճ Հայաստանի» հետ բանավէճում: Tert.am -ի հետ զրոյցում յայտարարեց ՀՀԿ մամուլի խօսնակ, ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը:

«Հանրապետական» կուսակցութեանը ոչ ոք չի կարող պայթեցնել, որովհետեւ բոլորը հասկանում են, որ ՀՀԿ-ին պայթեցնելը վտանգաւոր է»,- աւելացրեց ԱԺ փոխնախագահը:

Յիշեցնենք, որ կոալիցիոն «Հանրապետական» եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնների կենտրոնական դէմքերն ու մամուլի խօսնակները հանդէս էին գալիս փոխադարձ յայտարարութիւններով, որոնք կարելի է պայմանականօրէն անուանել. «ո՞վ ում կը պայթեցնի»: Tert.am-ի այն հարցին ի պատասխան, թէ նորմա՞լ է, օրինաչա՞փ է, որ կոալիցիոն գործընկերները փոխադարձաբար իրար պայթեցնելու մասին մտքեր են փոխանակում, Էդուարդ Շարմազանովը նշեց, որ ՀՀԿ-ն կոռեկտութեան սահմաններում է եղել: Ինչ վերաբերում է երեւոյթին, ապա այն Շարմազանովը սովորական աշխատանքային է որակում:

Մամուլում լուրեր կային, որ կոալիցիոն նիստում Սերժ Սարգսեանն ու Գագիկ Ծառուկեանը պայմանաւորուել են, որ նման կարգի հրապարակային յայտարարութիւնները «կողմերն» այլեւս դադարեցնելու են:

Մամուլում նաեւ տեղեկութիւններ կային այն մասին, որ իշխող կուսակցութիւնում անհանգստացած են սոցհարցման արդիւնքերով, ըստ որի՝ ԲՀԿ-ն ունի 33 տոկոս ձայներ, ՀՀԿ-ն՝ 18:

«Կարծում եմ, որ բոլորին յայտնի է, որ ՀՀԿ-ն է այս ընտրութիւնների ֆավորիտը, եւ կարեւորն այստեղ ոչ թէ լաւ ստարտն է, այլ արագ եւ լաւ ֆինիշին հասնելը»,-ասաց ՀՀԿ մամուլի խօսնակը: Նա այս առնչութեամբ աւելացրեց, թէ «ամենալաւ հարցումն» իր համար ապագայ խորհրդարանական ընտրութիւններն են:

# ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆՈՒՄ


Հայաստանի իշխող կոալիցիայի ղեկավարները՝ Գագիկ Ծառուկեան, Սերժ Սարգսեան եւ Արթուր Բաղդասարեան

Յունուար 30-ին երեկոյեան նախագահական նստավայրում կայացել է Հայաստանի իշխող կոալիցիայի երեք կուսակցութիւնների ղեկավարների՝ երկրի նախագահ, Հայաստանի հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) առաջնորդ Սերժ Սարգսեանի, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան (ԲՀԿ) նախագահ Գագիկ Ծառուկեանի եւ «Օրինաց երկիր» կուսակցութեան (ՕԵԿ) նախագահ Արթուր Բաղդասարեանի հանդիպումը:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում «Օրինաց երկիր» կուսակցութեան ղեկավար Արթուր Բաղդասարեանը փոխանցեց, որ նախագահի նստավայրում տեղի ունեցած կոալիցիայի ղեկավարների հանդիպումն անցել է «փոխըմբռնման մթնոլորտում»:

Ազգային անվտանգութեան խորհրդի քարտուղարը նաեւ նշեց, որ երկրի նախագահ, Հայաստանի հանրապետական կուսակցութեան առաջնորդ Սերժ Սարգսեանի եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեանի հետ քննարկել են Մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրութիւնների հետ կապուած հարցեր:

«Կարող եմ ասել, որ կոալիցիայի նիստն անցել է փոխըմբռնման մթնոլորտում, քաղաքական իմաստով՝ մեր դիրքորոշումների, մեր մարտավարութեան փոխհամաձայնեցման փուլում, որովհետեւ ի վերջոյ քաղաքական կոալիցիան ն աեւ պէտք է փորձի իր դիրքորոշումները ճշդել, հնարաւորինս համաձայնեցուած դիրքորոշումներով հանդէս գալ առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններում: Մանաւանդ, որ երեք կուսակցութիւններն էլ որոշում են կայացրել ընտրութիւններին մասնակցել առանձին», - ասաց Բաղդասարեանը:

# «ՀԱԿ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻՆ ՄԷՋ ՊԷՏՔ Է ԸԼԼԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ ԵՒ ԱՆԲԻԾ ՄԱՐԴԻԿ».- ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ


ՀՀՇ վարչութեան նախագահ Արամ Մանուկեան

Եթէ Հայ ազգային կոնգրէսի համամասնական ցուցակը կազմելու գործը անձնապէս ՀՀՇ վարչութեան նախագահին մնար, ապա ան ցուցակի անունները կ՛որոշէր համաժողովրդական հանրաքուէով: Այս մասին Tert.am-ին ըսաւ Հայոց համազգային շարժում կուսակցութեան նախագահ Արամ Մանուկեան՝ այդ քայլը պատճառաբանելով այսպէս. «Որպէսզի այդ անունները ժողովուրդը որոշէր, թէ ով է իր՝ ժողովուրդի քիմքին աւելի հարազատ»:

Նշենք, որ ՀՀՇ առաջնորդի վերջերս ըրած նմանատիպ յայտարարութիւնը , որ ՀԱԿ-ի համամասնական ցուցակին մէջ պէտք է ըլլան անոնք, «որոնք անբիծ են», «լիդեր են» ու «դաւաճան չեն», կարծես թէ այնքան ալ միանշանակ չէր ընդունուած կոնգրէսի անդամ կուսակցութիւններուն կողմէն: Մասնաւորապէս, «Հանրապետութիւն» կուսակցութեան անդամ Սուրէն Աբրահամեան նախ յայտարարած էր, թէ Արամ Մանուկեան «մէկ-մէկ տարօրինակ բաներ է ասում», ապա աւելացուցած էր, որ չի կրնար հասկնալ, թէ ինչ նպատակով ըսած է այդ ամէնը:

Առանց որեւէ մէկուն հակադարձելու, Արամ Մանուկեան կրկնեց, թէ ինչ նկատի ունի ինքը այս յայտարարութեամբ՝ «որ ՀԱԿ համամասնական ցուցակին մէջ պէտք է ըլլան առաջնորդներ եւ անբիծ մարդիկ»:

Արամ Մանուկեանը չի բացառեր, որ ՀԱԿ համամասնական ցուցակի կազմութեան ընթացքին կ՛ըլլան մարդիկ, որոնք կը դժգոհին, բայց այլ տարբերակ չկայ: Յիշեցնենք, որ երէկուընէ պաշտօնապէս յայտնի դարձաւ միայն, որ ՀԱԿ-ի համամասնական ցուցակի առաջին երկու տեղերը կը գլխաւորեն Լեւոն Տէր-պետրոսեանն ու Ստեփան Դէմիրճեանը:

Հայ ազգային կոնգրէսը Մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններին կը մասնակցի ՀԱԿ-ին անդամակցող կուսակցութիւններէն բաղկացած նախընտրական դաշինքով:

Այս մասին յայտարարեց ՀԱԿ-ի համակարգող Լեւոն Զուրաբեանը նշելով, որ գիտակցելով իրենց քաղաքական պատասխանատուութիւնը ժողովրդի առջեւ՝ կոնգրէսի մաս կազմող քաղաքական ուժերը որոշած են, որ նախընտրական դաշինքով մասնակցելու են յառաջիկայ ընտրապայքարին՝ «սա դարձնելով վարչախմբի դէմ համաժողովրդական ցասման գեներացման, քաղաքացիական ընդվզման, քաղաքական կամքի մէկտեղման, Սերժ Սարգսեանի նկատմամբ անվստահութեան արտայայտման հարթակ»:

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԹՈՅԼ ՉԻ ՏԱՅ ՀՀԿ-ԻՆ ԱԶՆԻՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՍՏԱՆԱԼ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ


Քաղաքական տեխնոլոգիաների մասնագէտ Արմէն Բաղալեան

«Այսօր քաղաքական դաշտում մնացել են երեք ուժ (ԲՀԿ, ՀԱԿ, եւ ՀՀԿ), որոնք էլ անցնելու են խորհրդարան»,- ասում է Քաղաքական տեխնոլոգիաների մասնագէտ Արմէն Բաղալեանը:

Նա նկատում է. «Պետականկառավարական ռեսուրսները առաւելապէս կենտրոնացած են ՀՀԿ-ի ձեռքին եւ, հաշուի առնելով այսօրուայ տնտեսական իրավիճակը, բնական է, որ միայն նա է չահագրգռուած անազնիւ ճանապարհով անցնել խորհրդարան, քանզի ստեղծուած տնտեսական վիճակը թոյլ չի տայ ՀՀԿ-ին ազնիւ ճանապարհով ստանալ մեծամասնութիւն (67 եւ աւելի տեղ)»:

Պարոն Բաղալեանը համարում է, որ ՀՀԿ-ն անպայման փորձելու է ստանալ այդ մեծամասնութիւնը (սա կառավարման ավտորիտար համակարգի օրինաչափութիւն է):

«Այդ իսկ պատճառով, սպասուելիք ընտրակեղծիքների դէմ կարող են եւ, պէտք է, պայքարեն (համագործակցեն) ՀԱԿ-ը եւ ԲՀԿ-ն միասին: Նրանք, ովքեր դէմ են այս համագործակցութեանը, նշանակում է

ա) «տառապում» են զգացմունքայնութեամբ:

բ) «տառապում» են յեղափոխական ռոմանտիզմով (զգացմունքային պատճառաբանութէան մէկ այլ տեսակ)

գ) խիստ գերագնահատում են սեփական հնարաւորութիւնները

դ) ունեն «անտեսանելի» շահ, որի մասին չեն կարող հրապարակային խօսել:

Որպէս վերոշարադրեալ մասի վերջաբան. Նրանք, ովքեր դէմ են հնարաւոր ընտրակեղծիքների դէմ ՀԱԿ-ԲՀԿ միասնական պայքարին, նպաստում են ՀՀԿ-ի (Սերժ Սարգսեանի) վերարտադրմանը: Եզրակացութիւնը թող անեն ընտրողները»,- յայտարարել է նա:

# ՆԱԽԿԻՆ ԲՀԿ-ԱԿԱՆԸ ՆՇԱՆԱԿՈՒԵՑ ԱՐԱՐԱՏԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան (ԲՀԿ) նախկին անդամ Կարէն Խաչատրեանը նշանակուել է Ոստիկանութեան Արարատ քաղաքի բաժանմունքի պետ:

Կարէն Խաչատրեանը «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան Արարատ եւ Վեդի քաղաքների տարածքային կառոյցի փոխնախագահն էր:

Խաչատրեանի հետ միասին ԲՀԿ-ից դուրս էին եկել նաեւ նրա համախոհները: Նա մամուլին փոխանցել էր, թէ իր հետ «Բարգաւաճ Հայաստան»-ից դուրս է եկել 400 հոգի, մինչդեռ կուսակցութեան Արարատի մարզային կառոյցի ղեկավար Տիգրան Ստեփանեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում պնդել էր, թէ ԲՀԿ-ից դուրս գալու մասին ընդամէնը 58 դիմում են ստացել, որոնց մի մասն էլ կեղծ են եղել:

# ԼՈՒՐԵՐ

## ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ Է ՀԱՄԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՒՈՒՄԸ



Միացեալ թագաւորութեան՝ դեսպան տիկին Քեթրին Ջէյն Լիչ

Հայաստանում Մեծ Բրիտանիայի եւ Հիւսիսային Իռլանդիայի Միացեալ Թագաւորութեան՝ (ՄԹ) նորաշանակ դեսպան տիկին Քեթրին Ջէյն Լիչը որպէս քաղաքական ակնկալիք առանձնացնում է առաջիկայ խորհրդարանական ընտրութիւնները եւ լարուած աշխատանքը, որ պէտք է տանել՝ Հայաստանի պատմութեան մէջ «լաւագոյն ընտրութիւնները» ստանալու համար: Տիկին դեսպանի կոչն ուղղուած է ոչ միայն ՀՀ իշխանութիւններին, այլեւ բոլորին եւ առաջին հերթին՝ ընտրողներին, որ ակտիւօրէն մասնակցեն քուէարկութեանը: Այս մասին Քեթրին Ջէյն Լիչը յայտարարեց լրագրողների հետ հանդիպման ժամանակ: Դեսպանի փոխանցմամբ՝ ՄԹ-ն առանցքային հարց է համարում նաեւ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ յարաբերութիւնների բարելաւումը:

Յիշեցնենք, որ այս տարուայ Յունուարին Ջոնաթան Ջէյմս Էյվս եւ Քեթրին Ջէյն Լիչ ամուսնական զոյգը նշանակուեց ՀՀ-ում համատեղ դեսպաններ՝ յաջորդելով Չարլզ Ջոն Լոնսդէյլին: Դեսպանի պաշտօնը նրանք կը կատարեն 4-ամսեայ հերթագայութեամբ:

«ՄԹ-ն միշտ էլ աջակից է եղել Թուրքիայի կողմից ԵՄ-ին անդամակցութեանը, որպէսզի Թուրքիան բարեկամանայ իր հարեւան երկրների հետ»,- նշեց Հայաստանում ՄԹ արտակարգ եւ լիազօր դեսպանը՝ անդրադառնալով Մեծ Բրիտանիայի վարչապետ Դէյվիդ Քեմերոնի այն յայտարարութեանը, որ իրենց երկիրը Թուրքիայի տեսնում է ԵՄ-ում: Տիկին դեսպանն ընդգծեց, որ Միացեալ Թագաւորութիւնը առանցքային հարց է համարում Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ յարաբերութիւնների բարելաւումը:

«Իւրաքանչիւր երկիր ինքն է որոշում, թէ դրա համար լաւագոյն նպատակը որն է, բայց մենք կարծում ենք, որ Թուրքիայի կողմից ԵՄ անդամակցութեամբ Հայաստանն ու Թուրքիան աւելի լաւ կը համագործակցեն»,- աւելացրեց բրիտանացի դիւանագէտը: Նա այս մասին խօսեց Հայոց ցեղասպանութեան՝ հայերի համար խիստ ցաւոտ հարցի համատեքստում:

Միացեալ Թագաւորութեան նորանշանակ դեսպանը, որ օրերս է հաւատարմագրերը յանձնել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանին, լաւ ծանօթ չէ Հայաստանի մշակոյթին, սակայն յոյս ունի արագ լրացնել այդ բացը:

## ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐՈՒ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՆՈՐ ՕՐԷՆՔ ՈՒՂՂՈՒԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐՈՒ ԴԷՄ

«Աշխատելու նպատակով Թուրքիա գտնուող Հայաստանի քաղաքացիներու՝ ազգային փոքրամասնութիւններուն պատկանող դպրոցներու մէջ ուսում ստացող երեխաները երկիւղած կը սպասեն Օտարերկրացիներու կացութեան մասին նոր օրէնքին, քանի որ նոր կանոնակարգումները, հնարաւոր է, որ յանգեցնեն երկրէն շատ օտարերկրացիներու վտարման»,- կը գրէ «Hurriyet Daily News»-ը

Պարբերականի լրագրողին հետ զրոյցին՝ հայկական մասնաւոր Մխիթարեան դպրոցի (Սթամպուլ) տնօրէն Գարեգին Պարսամեան ըսած է, թէ այդ «սպառողական վիճակը» «հոգեկան ցնցում է» երեխաներուն համար:

«Այս երեխաները մեծցած են Թուրքիոյ մէջ, այստեղ կրթութիւն կը ստանան: Եթէ ետ ուղարկուին, անոնց կեանքը գլխիվայր կ'ըլլայ»,- նշած է Պարսամեան:

Նոր օրէնքին համաձայն օտարերկրացիները Թուրքիոյ մէջ բնակելու իրաւունք կ'ունենան 90 օր միայն. այդ ժամկէտը լրանալէն ետք պէտք է լքեն Թուրքիոյ տարածքը, իսկ վերադառնալ կրնան միայն երեք ամիս անց: Նախապէս օտարերկրացիները, Թուրքիոյ մէջ երեք ամիս բնակելէ ետք, կրնային մէկ օրով լքել այդ երկրի սահմանը, ապա վերադառնալ՝ եւս երեք ամիս մնալու թոյլտուութեամբ եւ այդպէս շարունակ:

«Նոր օրէնքին համաձայն՝ Թուրքիոյ մէջ երեք ամիս բնակած անձը ստիպուած է եւս երեք ամիս սպասել՝ Թուրքիա վերադառնալու համար: Այդ երեխաներուն կրթութիւնը «կը խաթարուի»,- նշած է Պարսամեան:

Իսկ Սթամպուլի Հայ աւետարանական եկեղեցւոյ հոգեւոր առաջնորդ Գրիգոր Աղապալօղլու պարբերականին հետ զրոյցին ըսած է, թէ այդ նոր օրէնքին իրական «թիրախը» Թուրքիոյ մէջ ապրող հայաստանցիներն են: «Այդ օրէնքը, կը թուի, թէ «համընդհանուր է», այնուհանդերձ, անոր իրական թիրախը հայաստանցիներն են....: Կառավարութիւնը ինքզինք կը հակասէ. մէկ կողմէ այն «հիւր-աշակերտ»ի կարգավիճակ կը շնորհէ երեխաներուն, միւս կողմէ կը փորձէ արտաքսել անոնց ընտանիքները»,- ըսած է հոգեւոր առաջնորդը:

«Նոր օրէնքին համաձայն՝ անոնք, որոնք ի վիճակի կ'ըլլան 400 թրքական լիրա վճարել ապահովագրութեան համար, կը շարունակեն բնակիլ Թուրքիոյ մէջ: Այստեղ եկող հայաստանցիներուն 90 տոկոսը, սակայն, կանայք են եւ անոնց վաստակած գումարը շատ քիչ է, անոնք չեն կրնար այնքան գումար վճարել»,- ըսած է Աղապալօղլու եւ կոչ ուղղած չեղեալ յայտարարել այդ օրէնքը:

## ՉԻԼԻՈՒՄ ԲԱՑՈՒԵԼ Է «ՀԱՅԱՍՏԱՆ» ԱՆՈՒԱՆՈՒՄԸ ԿՐՈՂ ՀՐԱՊԱՐԱԿ

Յունուարի 29-ին, Չիլիի Պուերտօ Վիլյամս բնակավայրում, որի բնակչութիւնն ընդամէնը 2500 մարդ է, մեծ հանդիսաւորութեամբ բացուել է «Հայաստան» անուանումը կրող հրապարակ եւ զետեղուել Հայաստանից բերուած խաչքար:

Ըստ ՀՀ Արտգործնախարարութեան հաղորդագրութեան, Պուերտօ Վիլյամսին հայկական խաչքար նուիրելու գաղափարը պատկանում է հանրաճանաչ արգենտինահայ գործարար, «Կորպորասիոն Ամերիկա» ընկերութեան նախագահ Էդուարդօ Էռնեկեանին:

Միջոցառմանը մասնակցել են այդ նպատակով Պուերտօ Վիլյամս ժամանած Էդուարդօ Էռնեկեանը, Արգենտինայում եւ համատեղութեան կարգով Չիլիում Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վլադիմիր Կարմիրշալեանն ու Չիլիում ՀՀ պատուաւոր հիւպատոս Էդուարդօ Ռոդրիգես Գուառաչին:

Չիլիական կողմից հանդիսութեանը մասնակցել են Չիլիական Անտարկտիկա նահանգի նահանգապետի պաշտօնակատար Ֆաբիոլա Տորրէս Պերալտան եւ պաշտօնատար այլ անձինք:

Ելոյթներով հանդէս են եկել գործարար Էդուարդօ Էռնեկեանը, ՀՀ դեսպան Վլադիմիր Կարմիրշալեանը եւ փոխծովակալ Ումբերտօ Ռամիրես Նաւառօն:

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

Շարունակուած էջ 1-էն

- «Ազատութիւն» ռատիօկայանին ըսած է Թադեւոսեան:

Թադեւոսեան նաեւ կասկած յայտնած, թէ ԿԸՅ-ն կը կարողանայ 100 տոկոսանոց անվտանգութիւն ապահովել կայքէջի համար, որպէսզի այն չենթարկուի յարձակման ու քուէները չկեղծուին յօգուտ իշխող կուսակցութիւններու:

Ազգային ժողովէն ներս «Ժառանգութիւն» խմբակցութեան քարտուղար Լարիսա Ալավերդեան ողջունելէ ետք նորամուծութիւնը, «Ազատութիւն» ռատիօկայանին ըսած է,- «Նախ եւ առաջ այդ ցուցակների հարցը, ինչպէս են դրանք կազմուելու, ինչպէս են դրանք հրապարակային եւ թափանցիկ լինելու քաղաքացիական հասարակութեան շահագրգիռ կողմերի համար: Եւ երկրորդը՝ լաւագոյն օրէնքները բերւում են Հայաստան եւ զարմանալի ձեւով տալիս են վատ արդիւնքներ: Դա նրանից է, թէ ինչ նպատակադրում է ունենում այս կամ այն քաղաքական ուժը»:

## ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԵՒ ԱՅԼ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

Թանկ ե՞ն, թէ՞ էժան բնակարանների գները Երեւանում: Այս հարցը կոնկրետ պատասխան ունենալ չի կարող: Եթէ համեմատենք Մոսկուայի կամ Փարիզի գների հետ՝ Երեւանում բնակարաններն էժան են, եթէ համեմատենք հարեւան Թբիլիսիի հետ՝ թանկ են: Այսպէս՝ Թբիլիսիի կենտրոնում (Իոսելիանիի փողոցում) ամենաշքեղ բնակարանը (մեր ընկալմամբ՝ էլիտար) վաճառւում է քառ. մետրը 1000 դոլարով: Երեւանի Հիւսիսային պողոտայում բնակարանները վաճառւում են սկսած քառ. մետրը 2300 դոլարից, ընդ որում՝ այդ բնակարանները կահաւորուած չեն: Երեւանի Փոքր կենտրոնի մի քանի փողոցներ կան (Թումանեան, Ամիրեան), որտեղ բնակարանների գները տատանւում են քառ. մետրը 2000 դոլարի սահմաններում: Փոքր կենտրոնի միւս հատուածներում գները 1500 դոլարի սահմաններում են:

Մոսկուայի հետ համեմատած սրանք իհարկէ թանկ չեն: Օրինակ, Մոսկուայի կենտրոնում բնակարանների գները սկսում են քառ. մետրը 10 հազ. դոլարից, ու կարող են հասնել մինչեւ 20 հազ. դոլար: Սակայն, օրինակ, Փարիզի կենտրոնում բնակարանների գները 2-6 հազ. դոլարի սահմաններում են: Օրինակ՝ Փարիզի հենց սրտում՝ Լուվրի, քաղաքապետարանի եւ Փարիզի Աստուածամօր տաճարի շրջակայքում 3-4 սենեականոց բնակարանների գները 3-6 հազ. դոլար են՝ 1 քառ. մետրի համար: Սակայն Փարիզն ունի մի կարեւոր առանձնայատկութիւն: Այստեղ տարածուած են փոքր եւ յարմարաւէտ բնակարանները, որոնք նախատեսուած են ուսանողների կամ գործարարների համար: Այսպէս՝ յատուկ ուսանողական բնակարաններն ունեն 18-25 քառ. մետր մակերես ու նորակառոյց շէնքերում արժեն մօտ 80 հազ. դոլար ( եթէ կենտրոնում է) եւ մօտ 45 հազ. դոլար (եթէ արուարձան է): Սովորաբար ուսանողական բնակարանները վարձակալութեան են յանձնում ամսական 500 դոլարով:

Ըստ էութեան՝ Երեւանին պակասում են հենց նմանատիպ բնակարանների առաջարկը, որոնք բաւականաչափ յարմարաւէտ կը լինեն, սակայն նաեւ մատչելի ոչ հարուստ խաւերի համար:

## ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Մեր պաշտօնակից ծանօթ լրագրող The Armenian Observer շաբաթաթերթի արտօնատէր եւ խմբագիր ՕՇԻՆ ՔԷՇԻՇԵԱՆ անցեալ Ուրբաթ, հանդիսութեան մը ընթացքին սրտի անակնկալ տագնապ մը անցնելով իսկոյն հիւանդանոց փոխադրուած է: Ներկայիս կը գտնուի բժշկական անմիջական խնամքի ներքեւ: Իր ընդհանուր առողջական վիճակը կը նկատուի մտահոգիչ:

«Մասիս»ի խմբագրութիւնն ու անձնակազմը շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն կը մաղթեն Պրն. Օշին Քէշիշեանին:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԲԱՆԱՎԷՃԻ ՇՈՒՐՋ

**ԷԴԳԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ**
*(Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) փորձագէտ)*

Եթէ ընտրական համակարգի խնդիրը դիտարկենք տեսական հարթութեան վրայ, ապա կը տեսնենք, որ բոլոր առկայ համակարգերն ունեն իրենց թերութիւններն ու արժանիքները: Գիտական աշխարհում չկայ մէկ տեսակէտ, թէ որ համակարգն է նախընտրելի: Հնարաւոր է, որ համամասնական համակարգի կողմնակիցների քանակը աւելին լինի, քան՝ մեծամասնականինը, սակայն, ամէն դէպքում, դա չի նշանակում, որ մեծամասնականի կողմնակիցների փաստարկները նուազ թոյլ են: Սակայն ընտրակարգերին վերաբերող բանավէճերում մասնագէտները համակարծիք են հետեւեալ հարցում՝ չկայ այնպիսի ընտրական համակարգ, որը չհամապատասխանի ներկայացուցչական ժողովրդավարութեանը: Բոլոր ընտրական համակարգերն էլ աւելի կամ նուազ արդիւնաւէտութեամբ ապահովում են հասարակութեան քուէի՝ կոնկրետ մանդատների վերածումը:

Սակայն ինչու այս, ըստ էութեան, վիճելի հարցը դարձաւ իշխանութիւններ-ընդդիմութիւն փոխյարաբերութիւնների հիմնական կռուանը:

Իշխանութիւնների կողմից (այս դէպքում՝ հիմնականում ՀՀԿ-ի եւ ՕԵԿ-ի) ընտրակարգի փոփոխութեան դէմ արտայայտուող դիրքորոշումը, ամենայն հաւանականութեամբ, պայմանաւորուած է իշխանական դաշտում առկայ այն համաձայնութեամբ, թէ օլիգարխների գերակշիռ մասն առաջադրուելու է մեծամասնականով, որպէսզի «չկեղտոտուեն» համամասնական ցուցակները: Ի դէպ, ՀՀԿ-ականները հենց իրենք են բացայայտել համամասնական ցուցակի հետ կապուած իրենց ապագայ քաղաքականութիւնը: Մասնաւորապէս ՀՀԿ փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբեանը վերջերս յիշեցրեց նախագահի այն խօսքը, որ պէտք է աշխատել համամասնական ցուցակում նուազագոյնի հասցնել օլիգարխների մասնակցութիւնը՝ աւելացնելով, որ նրանց համար կայ մեծամասնական համակարգ:

Ներկայ ընտրակարգի պահպանումը իշխանութիւններին ձեռնտու է նաեւ այլ պատճառներով: Մեծամասնական ընտրատարածքներում յաղթանակ տանելն իշխանութիւնների համար աւելի հեշտ է: Նաեւ այդ համակարգը մեծապէս նպաստում է համամասնական ընտրակարգով իշխանական կուսակցութիւնների օգտին ձայների ստացմանը:

Նախ պէտք է նշել, որ մեծամասնական ընտրատարածքներում շատ յաճախ չի լինում որեւէ լուրջ մրցակցութիւն: Տեղային կլաններից դուրս եկած իշխանութիւնների ներկայացուցիչները կարողանում են լեզու գտնել «սեփական» ընտրատարածքի բնակիչների հետ եւ հիմնականում տարբեր մարդկանց անձնական խնդիրների լուծմամբ կամ լուծման խոստումներ տալու ինստիտուտը աշխատեցնելով, ընտրողների նկատմամբ որոշակի ճնշումներ բանեցնելով անհրաժեշտ ձայները հեշտութեամբ հաւաքել: Յաճախ նրանց նոյնիսկ յաջողւում է «սեփական տարածք» չթոյլատրել այլ թեկնածուների մուտքը: Փաստացի մեծամասնական համակարգով կազմակերպուող ընտրութիւնները դառնում են անայլընտրանքային եւ ինչ-որ տեղ՝ ապաքաղաքական:

Մեծամասնականով առաջադրուող պատգամաւորի թեկնածուն կրկնակի ուժ է ներդնում ԱԺ ընտրութիւնների ժամանակ: Վերջինիս սատարող կուսակցութիւնը շահագործում է նրա անձնական ամբիցիաները՝ սեփական տարածքում «ընտրեալ» լինելու հնարաւորութիւն տալու դիմաց նա պարտաւորւում է ձայներ ապահովել համամասնական ընտրակարգով առաջադրուող իրեն պաշտպանող կուսակցութեան օգտին:

Այս ամէնի շնորհիւ իշխանական կուսակցութիւնները հնարաւորութիւն են ստանում իրենց համամասնական ցուցակը կազմելիս յաճախ խուսափել օլիգարխիկ բարդ պայմանաւորուածութիւնների ձեռքբերումից: Արդիւնքում ցուցակում կարող են մեծամասնութիւն կազմել «քաղաքական» դէմքերը կամ, այլ կերպ ասած, տեխնոկրատները: Վերջիններս, ինչպէս երեւում է, պէտք է դառնան իշխանական քարոզչութեան գլխաւոր գործիքներից մէկը:

Բացի դրանից, ընտրութիւնների արդիւնքներին «եւրոպական» տեսք տալու համար, իշխանութիւնները, հարկ եղած դէպքում, կարող են եւ չձգտել համամասնական ցուցակով վերցնել բացարձակ մեծամասնութիւն: Դրա համար անհրաժեշտ մանդատները նրանց մօտ արդէն առկայ կը լինեն մեծամասնականով իրականցուած ընտրութիւնների արդիւնքում:

Սակայն պէտք չէ մտածել, որ անցումը 100% համամասնական ընտրութիւնների ինքնին ի վիճակի կը լինի չէզոքացնել իրենց

Շար.ը էջ 19

# ՍԵՐՆԴԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ՄԻԱԿ ՃԱՆԱՊԱՐՀ

**ԳԷՈՐԳ ԳՈՁԱԼԵԱՆ**

«Այն, ինչ մի ժողովրդի համար, նրա որոշ հասակում, բարերար սննդամիջոց է, մէկ ուրիշի համար կարող է թոյն համարուել, ուստի ժողովրդի համար լաւ է միայն այն, ինչ բխում է նրա սեփական էութիւնից:» («Զրոյցներ Գէօթէի հետ»: Էքերման, Երեւան 1975):

Այս խօսքերը ասել է հռչակաւոր գրող Գէօթէն, եւ ներկայ ժամանակներում, կարդալով դրանք, չի կարելի չընդունել դրանց ճշմարտացիութիւնը:

Ժողովրդի հասակ. ի՞նչ է դա, եթէ ոչ հաւաքական մտածողութեան ձեւ, որը դրսեւորւում է ժողովրդի վարքագծում: Ասել կ'ուզի, կոնկրետ ժողովրդի մեծամասնութեան վարքագծից կարելի է դատել նրա որոշակի հասակի մասին: Իր հերթին, հասակը ճշմարտապէս որոշելուց յետոյ, կարելի է յստակ եզրակացութիւն կազմել այդ ժողովրդի ապրելակերպի արդարացիութեան վերաբերեալ:

Իմ պատկերացմամբ, պետութիւնը կամ աւելի ճիշտ ժողովուրդը, որն ապրում է որոշակի տարածքում, նման է ընտանիքի: Բնականաբար ընտանիքում կան որոշակի կանոններ, որոնցով ընտանիքի անդամները յարաբերւում են միմիանց հետ: Պարզելու համար մեր ընտանիքի՝ Հայաստանի կանոնները, ես մի փոքր անդրադարձ պէտք է կատարեմ ոչ վաղ անցեալին, որպէսզի հասկանանք մեր ընտանիքի կանոնների հիմնական ծագումնաբանութիւնը, որից էլ կարող ենք հասկանալ, ի վերջոյ դրանք (կանոնները) մեր էութեան եւ մեր հասակին համապատասխանող կանոններ են, թէ ոչ:

Հայաստանն, անջատուելով Խորհրդային Միութիւնից, հրաժարուեց իր այն կանոններից, որոնք իրեն պարտադրւում էր Մոսկուան: Այս առումով Հայաստանը փորձեց ստեղծել իր սեփական կանոնները: Անկախացման նախնական փուլում Հայաստանն իր կանոնները մշակում էր հիմք ընդունելով ԱՊՀ մոդելային օրէնքները, իսկ այնուհետեւ՝ 2001 թուականից սկսած, հիմք է ընդունում եւրոպական օրէնքները: Մինչ 2005 թուականը, երբ նախապատրաստւում էին ՀՀ Սահմանադրութեան փոփոխութիւնները (ոչ Արմէն Յարութիւնեանի ներկայացրած), ես՝ որպէս «Հայաստանի երիտասարդ իրաւաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպութեան ներկայացուցիչ, մասնակցում էի ԱԺ քննարկումներին: Դեռ այդ ժամանակ սեղանին դրուած էր Սահմանադրութեան նախագծերի երեք տարբերակ՝ Արշակ Սադոյեանի կիսատ եւ թերի սահմանադրութեան նախագիծը, Գուրգէն Արսէնեանի նախագիծը եւ Հանրապետական կուսակցութեան նախագիծը: Պէտք է ասեմ, որ այդ երեքից որեւէ մէկը որեւէ աղերս չունէր ներկայ Սահմանադրութեան հետ: Իսկ ինչպէս հրապարակ իջաւ ներկայ Սահմանադրութիւնը: Շատ պարզ. պատկերաւոր ասած գնաց Եւրոպա եւ վերադարձաւ Հայաստան՝ ներկայ տեսքով: Այնուհետեւ այն դրուեց հանրաքուէի: Ժողովրդի մեծ մասն ընդդիմութեան կոչով չմասնակցեց քուէարկութեանը, սակայն այն ընդունուեց: Արձանագրելով փաստերը, այնուհանդերձ, ես՝ որպէս իրաւաբան, բաւականին բարձր եմ գնահատում մեր ներկայ Սահմանադրութիւնը եւ կարծում եմ, որ այն լաւագոյներից մէկն է: Սահմանադրութեան փոփոխութիւններից՝ 2005 թուականից յետոյ, Հայաստանում կանոններն էլ աւելի ուժեղ թափով սկսուեցին եւրոպականացուել, որն ընթանում է մինչ օրս: Թէ ինչքանով ժողովուրդը կապ ունի այդ կանոնների հետ, երեւում է իշխանական երեք թեւերից, երբ

Շար.ը էջ 19



# «ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, ՔԱՆԻ ԴԵՌ ԴԺՈԽՔԸ ՉԻ ԲԱՑՈՒԵԼ»

***Ներողութիւնը հասունութեան նշան է, եւ Թուրքիայի համար եկել է ներողութեան ժամանակը: Այդ մասին յայտարարել է Թուրքիայի հրէական համայնքի յայտնի ներկայացուցիչ, գործարար եւ Բաց հասարակութեան ինստիտուտի հիմնադիր Իսհակ Ալաթոնը: Նրա խօսքով, քիչ ժամանակ է մնացել մինչեւ 2015 թուականը, երբ Թուրքիան կը բախուի Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի հետ կապուած հայկական լոբբիի հզօր արշաւին:***

***«Թուրքական հասարակութիւնը շատ արագ է փոխւում, բայց նրա մենթալիտետը դեռ հալոցքի կարիք ունի»,- ասել է Ալաթոնը թուրքական «Hurriyet Daily News»-ի տուած հարցազրոյցում, որից հատուածներ է ներկայացնում NEWS.am-ը:***

-Դուք վերջերս կոչ արեցիք Թուրքիային ընդունել սեփական անցեալի իրողութիւնները: Ի՞նչ իրողութիւններ պէտք է թուրքերն ընդունեն՝ կապուած փոքրամասնութիւնների հետ:

***-Ես կարծում եմ, որ հասարակութիւնում գոյութիւն ունի դոգմատիկ սառեցում, որը պէտք է հալուի: Թուրքիայի կրթութեան համակարգի հիմքում 90 տարի եղել են դոգմաներ: Ես ցանկանում եմ, որ Թուրքիան մտաւոր յեղափոխութիւն իրագործի: Մենք պէտք է հրաժարուենք մեր նախապաշարումներից եւ դառնանք հարցասէր հասարակութիւն:***

-Ի՞նչ նախապաշարումներ ունենք մենք փոքրամասնութիւնների վերաբերեալ:

***-Գոյութիւն ունի դոգմա, թէ փոքրամասնութիւնները վնասաբեր են: 1920 թուականից հասարակութեանը ներարկուել է տեսութիւն, թէ իրեն թուրք չհամարողն օգտակար չէ եւ նոյնիսկ վնասաբեր է:***

-Ոմանք ասում են, որ Թուրքիայի իշխող Արդարութիւն եւ զարգացում կուսակցութիւնը ձգտում էր միջազգային լեգիտիմութեան՝ փորձելով սիրաշահել փոքրամասնութիւնների անդամներին:

***-Ես կողմ չեմ այդ հայեացքներին, բայց չեմ էլ քննադատում: Նպատակն արդարացնում է միջոցները: Եթէ Թուրքիայի իշխող կուսակցութիւնը գործի պրագմատիզմի դիրքերից՝ ապագայում կը գիտակցի, թէ ժողովրդավարութիւնն ինչքան օգտակար է:***

-Բայց չէք կարծո՞ւմ, որ այն արգելակում է: Օրինակ՝ Դինքի գործը:

***-Անկասկած, կը լինեն շեղումներ, բայց մենք ճիշդ ուղու վրայ ենք: Դինքի գործում կարծես՝ դեռ գոյութիւն ունի խորքային պետութիւնը: Գործող կառավարութիւնը, կարծես՝ ի վիճակի չէ վարել ուժեղ քաղաքականութիւն այն յաղթահարելու համար: Բայց կայ նաեւ աճող ճնշում հասարակութեան կողմից:***



Իսհակ Ալաթոն կը զրուցէ «Hurriyet Daily News»-ի թղթակիցին հետ

-Ո՞րն է ձեր վերջին ուղերձի նպատակը:

***-Ես կարծում եմ, որ մենք չենք յաղթահարի որոշ հիմնախնդիրներ կարճ ժամանակահատուածում: Բայց ինձ անհանգստացնում է 2015 թուականը: 2015-ի ապրիլին դժոխքը կը բացուի: Մենք պէտք է արագ գործենք: Ահա, թէ ինչու ես համոզեցի Բաց հասարակութեան ինստիտուտին ճանապարհային քարտէզի անհրաժեշտութիւնը: Մենք կը ցուցադրենք տասը ներողութիւնների դէպքեր:***

-Կարծո՞ւմ էք, որ պայմաններն այնքան են հասունացել, որ ձեր կոչը կը լսեն:

***-Մենք ունենք հասարակութիւն, որը կառավարութեանը չի ցուցաբերում այնքան անհրաժեշտ աջակցութիւն: Ոչ կառավարական կազմակերպութիւնները պէտք է նախապատրաստեն հասարակութեանն այնպէս, որ կառավարութիւնն իրեն յարմարաւէտ զգայ ներողութիւնների համար: Կառավարութիւնը նախկինի պէս քննադատութիւն է ստանում, թէեւ քննադատական ձայները սահմանափակւում են հասարակութեան 10-15 տոկոսով: Սակայն նրանց ձայնն այնքան ազդեցիկ է, որ ամենից բարձր է հնչում: Պէտք է լինի հասարակութիւն, որը կը խնդրի կառավարութեանը ներողութիւն յայտնել:***

-Դուք ակնարկում էք, որ 2015-ին Թուրքիայի դէմ մեծ արշա՞ւ կը լինի:

***-Աշխարհի կէսն այս հարցով մեր դէմ է: Սակայն հիմնախնդրի հիմքում մեր անզգայնութիւնն է: Մենք կատարել ենք սպանութիւն, բայց ժխտում ենք: Սպանութեան զոհերը տանջւում են ոչ թէ սպանութիւնից, այլ՝ սպանութեան ժխտումից:***

-Պէ՞տք է մենք սպանութիւններ ճանաչենք ցեղասպանութիւն եւ ներողութիւն խնդրենք:

***-Ես այդքան պարզունակ հայեացք չունեմ: Ես համարում եմ ժխտումը ստորութիւն, եւ հենց այդ պատճառով կարծում եմ, որ մենք պէտք է ներողութիւն յայտնենք: Ես չեմ առաջարկում ներողութիւն խնդրել կատարած սպանութեան համար, այլ՝ սպանութեան ժխտման համար: Սպանութիւնը ես չեմ կատարել, այլ՝ պապս, որին ես չեմ ճանաչում: Փիլիսոփայութեան իմ պրոֆեսորն ասում էր. «Արդարացի չէ հայրերի մեղքերի համար պատասխանատուութիւնը դնել զաւակների եւ թոռների ուսերին»:***

-Ես ենթադրում եմ, որ դուք ներողութիւն էք ցանկանում ոչ միայն հայերի համար:

***-Անցեալում մենք անթիւ սպանութիւններ ենք գործել եւ թաքցրել ենք դիակները՝ կարծելով, թէ ոչ ոք չի տեսնի: Բայց դիակները փտել են եւ տարածում են այնպիսի ահաւոր գարշահոտութիւն, որ մենք չենք կարողանում շնչել: Մենք պէտք է հասունանանք: Մենք պէտք է բացենք զաղտնի սենեակի դուռը եւ յուղարկաւորութիւն կատարենք: Հասարակութիւնը դրան է գնում: Բայց մենք պէտք է աւելի արագ գործենք:***

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆ. Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ ՎԱՏԹԱՐԱՑԱԾ

*Հաւաստի աղբիւրներէ կ'իմանանք թէ Երուսաղէմի Հայոց պատրիարքը՝ Ամենապատիւ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան անակնկալօրէն անհանգստանալով հիւանդանոց փոխադրուած է: 94 ամեայ սրբազանը կը գտնուի բժշկական անմիջական հոգածութեան տակ:*

*Վերջին շրջանին տեղի ունեցաւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան ներքին կանոնագրի բարեփոխութիւն, որ վերջնականապէս պէտք է վաւերացուի Յորդանանի, Իսրայէլի եւ Պաղեստինեան պետութեանց կողմէ:*


**ATTENTION**

**HAVE YOU INVESTED IN DELTA PETROLEUM (DPTR)?**

**If you or anyone you may know owns or may have owned stock in Delta Petroleum Corp.**

**please contact the Yeghiayan Law Firm at (818) 242-7400, or at research@yeghiayanlaw.com**
**If you have ever invested in this company, please contact us today.**

Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs
6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048
805 East Broadway Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

New York Life · Anthem · BlueShield · Aetna · Health Net · CIGNA · KAISER PERMANENTE
Seniors 65 & Up Medicare Supplements · Insurance · Prescriptions Drugs RX · Benefits

A.B.A. INSURANCE SERVICES
Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.

## ՀԲԸՄ ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ «ԱԶԳԱՆՈՒԻՐՈՒՄ»Ի ՅՈՒՆՈՒԱՐ ԱՄՍՈՒԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



Աւանդական գիտելիքներով լեցուն, ուսանողական օգտաշատ կարծիքներու փոխանակում, ազգանուէր գործունէութեամբ բեղուն հաւաք մը ունեցանք ՀԲԸՄ Փասատինայի Կեդրոնէն ներս, Շաբաթ Յունուար 14ին, ուր 40ի շուրջ աշակերտներ եւ ուսանողներ ներկայ էին: Սոյն ձեռնարկին ներկայ էին նաեւ Դոկտ. եւ Տիկին Միհրան եւ Էլիզապէթ Աղպապեանները: Դոկտ. Աղպապեան իր խօսքին մէջ գնահատելով «Ազգանուիրում»ի ղեկավարութիւնը, որ նման շինիչ ու օգտաշատ բնոյթով աշխատանքի մը ձեռնարկած է, ուր համալսարանական ուսանողներն ու դպրոցական աշակերտները միատեղուելով եւ խորհրդակցելու առիթը կ'ունենան իրարու փորձառութիւններէն սորվելով եւ օգնած կ'ըլլայ մեր յաջորդ սերունդին: Ազգանուիրումի հանդիպումներուն ընթացքին աշակերտ-աշակերտուհիներ եւ ուսանողներ համախմբուելով, կարելիութիւնը կ'ունենան հայ մշակոյթին մօտէն ծանօթանալ, իսկ խորհրդատուներու կողմէ աշակերտներուն կը փոխանցուի համալսարանական կարեւոր գիտելիքներ, ինչպէս նաեւ մասնագիտութեան ընտրութեան եւ տարբեր կարելիութեանց մասին խորհուրդներ: Այս առումով մեր Յունուար 14ի հանդիպումը, իր մէջ կը պարփակէր բաւական ճոխ եւ հետաքրքրական թեմաներ:

Առաջին հերթին, նկատի առած որ Մարթին Լութեր Քինկի տարեդարձի թուականին մօտ տեղի կ'ունենար այս հաւաքը, Տիկին Սեւան Տէր Պետրոսեանը ներկայացուց Մարթին Լութեր Քինկը եւ այդ նիւթը կապեց մեր դատին վերջին զոհերէն մէկուն՝ Հրանդ Տինքին սպաննութեան հետ: Ներկայ աշակերտները ամենայն հետաքրքրութեամբ հետեւեցան երկու իրաւատենչ գործիչներու մասին ցուցադրուած տեսաերիզին եւ հասարակ յայտարարներ որոնելով գտան նմանութիւններ այս երկու ազատատենչ եւ յանդուգն անձնաւորութիւններուն արտայայտութիւններուն եւ գործունէութիւններուն մէջ: Տիկին Սեւան Տէր Պետրոսեան նաեւ ներկայացուց հայկական տոհմիկ Նոր Տարուան տօնակատարութիւններուն մասին տեսաերիզ մը, որուն ցուցադրութեան ընթացքին ներկաներուն փոխանցեց կարեւոր գիտելիքներ մեր աւանդութիւննե-

Շար.ը էջ 20

## ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 500-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ



(Ձախէն աջ) օրուան գլխաւոր բանախօս Զաքարիա Միլտանօղլու, թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան եւ հանդիսավար Յակոբ Վարդիվառեան

Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի Առաջնորդարանի նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանի, Երեքշաբթի Յունուար 24-ի երեկոյեան, Առաջնորդարանի համալիրին մէջ նշուեցաւ Հայ Տպագրութեան 500-ամեակը: Ներկայ էր Նիւ Եորքահայ գրասէր հասարակութիւնը:

Այս առթիւ Պոլիսէն յատկապէս հրաւիրուած էր «Ակօս» շաբաթաթերթի, 2008-էն սկսեալ, սիւնակագիր Զաքարիա Միլտանօղլու՝ ներկայացնելու Օսմանեան տարիներու հայ տպագիր մամուլը իր ամբողջական երեսներով: Միլտանօղլու հրաւիրուած էր դասախօսելու Հրանդ Տինքի սպանութեան հինգերորդ տարելիցին առթիւ:

Շրջանի զանազան կազմակերպութիւններու մասնակցութեամբ իրագործուեցաւ այս հանդիսութիւնը: Կոստանդնուպոլսոյ Օգնութեան Ընկերութեան, Եսաեան-Կեդրոնական Սանուց Միութեան, Առաջնորդարանի Կոմիտաս Երգչախումբին, Հայ Տունի, Դպրեվանքի Սանուց Միութեան, Գրիգոր եւ Գլարա Զօհրապ Տեղեկատուութեան Կեդրոնին եւ Թէքէեան ու Համազգային Մշակութային Միութիւններու աջակցութեամբ:

2012 տարուան վրայ երկարող հանդիսութեանց շարքին առաջինն էր այս հանդիսութիւնը:

Յանուն միացեալ յանձնախումբին, բացման խօսքը կատարեց Արթօ Խրիմեան, որ ներկայացուց օրուան հանդիսավարը՝ Թէքէեան Մշակութային Միութեան Մեծն Նիւ Եորքի մասնաճիւղի ատենապետ Յակոբ Վարդիվառեանը: Ան ամփոփ գիծերով ներկայացուց հայ

Շար.ը էջ 20

## ՄՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՅԼԱՐՇԱՒ
### Հայ Ընտանիքի հզօրացման եւ կայունացման ի խնդիր

Տեառնընդառաջի տօնին առիթով, Հայ Ընտանիքի հզօրացման եւ կայունացման ի խնդիր տեղի կ'ունենայ մոմավառութիւն եւ քայլարշաւ Երկուշաբթի, Փետրուար 13, 2012-ին:

Հովանաւորութեամբ եւ քաջալերութեամբ Թեմիս Առաջնորդ՝ Գերշն. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, կազմակերպութեամբ Արժ. Տ. Վազգէն Քհնյ Մովսէսեանի, Արեւմտեան Թեմը նախաձեռնած ու կազմակերպած է յատուկ ծրագիր աշխատանք ընդդէմ տնային բռնութեան մեր համայնքի կեանքէն ներս:

Մոմավառութիւն եւ քայլարշաւը պիտի սկսի Երկուշաբթի, Փետրուար 13, 2012, կէսօրէ ետք ժամը 4.00-ին Կլէյնտէյլի Սբ. Պետրոս Եկեղեցիէն (632 W. Stocker St., Glendale, CA), դէպի Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճար (3325 N. Glenoaks Blvd., Burbank):

Քայլարշաւի մասնակցողները իրենց հետ պիտի ունենան պաստառներ «Բռնութիւնը կը վիրաւորէ, սէրը կը յաղթանակէ» արձանագրութեամբ, վերջ տալու բոլոր տեսակի բռնութիւններուն:

Երեկոյեան ժամը 6:30-ին Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ տեղի պիտի ունենայ Տեառնընդառաջի արարողութիւն, որուն խորհուրդն ու պատգամը Յիսուս Քրիստոսի տաճար ընծայումն է, եւ անոր հետ մէկտեղ ընտանիքի նկատմամբ նուիրում եւ սրբութիւններու ու արժէքներու պահպանում:

Արարողութեան ընթացքին Սրբազան հայրը պիտի դիմաւորէ ուխտաւորները եւ պիտի փոխանցէ իր պատգամը եւ օրհնութիւնները հայ ընտանիքներուն:

Արարողութեան աւարտին Սրբոց Ղեւոնդեանց շրջափակէն ներս տեղի պիտի ունենայ աւանդական խառուկահանդէս, որ կը խորհրդանշէ Աշխարհի Լոյսը՝ Յիսուս Քրիստոսը, որ եկաւ աշխարհ մեր մեղքերը սրբելու եւ Իր անմահական կրակովը մեր հոգիի աղտերը մաքրելու ու վերանորոգելու՝ մեր առջեւ հարթելով դէպի Աստուած ճանապարհը, դէպի մեր նմանին, մեր ընտանիքներուն եւ մեր զաւակներուն:

Շար.ը էջ 18



## ՀԱԼԷՊ

# ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ՈԳԵԿՈՉՈՒՄ ԵՒ ՍՏԵՓԱՆ ՍԱՊԱՀԳԻՒԼԵԱՆԻ 150 ԱՄԵԱԿԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

*ԱՆԻ ՄԱՐՍԷԼԵԱՆ*

*Հերոսները կը ծնին, բայց երբեք չեն մեռնիր: Անոնք կը ծնին բոլորի նման, կ՚ապրին իրենց յատուկ խոյանքներով կը տիրեն ժամանակին, կը դառնան հերոս ու կը մնան անմահ. հերոսները չեն մեռնիր այլ կը դառնան լուսաւոր ջահեր, լուսաւորելով դէպի ազատութեան տանող ճանապարհ: Այսպէս էր նախաբանը Տ.Ո.Ե.Մ-ի վարչութեան անդամ ընկ. Սողոմոն Եափուճեանի բացման խօսքին, Քսան Կախաղաններու ոգեկոչման եւ հնչակեան մեծ տեսաբան Սապահգիւլեանի ծննդեան 150ամեակին նուիրուած յիշատակելի հանդիսութեան, որ եղաւ վերջին օղակը 2011-ի Կիլիկեան շրջանակի եւ Հնչակեան կուսակցութեան հանդիսութիւններու ոսկեշղթային: Հալէպի Տ.Ո.Ե.Մ-եան վարչութեան կազմակերպած այս հանդիսութիւնը տեղի ունեցաւ Հալէպի Ջուարթնոց եկեղեցւոյ «Աղաճանեան» սրահին մէջ հովանաւորութեամբ Բերիոյ Թեմի կաթողիկէ Առաջնորդ Արհ. Տ. Պետրոս Արք. Միրիաթեանի:*

Եկէք հաւաքաբար եւ կրկին անգամ մեր շնորհակալութիւնը յայտնենք նաեւ Արսէն Սայեան մանկավարժին, որու դաստիարակչական-ուսուցողական մականի տակ մեզմէ շատեր սորվեցան խումբի մէջ համաչափ եւ ներդաշնակ երգել եւ միեւնոյն ժամանակ երաժշտական-գեղագիտական դաստիարակութիւն ստացան Հալէպէն մինչեւ Ամերիկա, եւ ոչ միայն այդքան: Այստեղ եղողները կը վկայեն, չեն կրող մոռնալ փորձերու հետ կապուած այն ընդարձակ (ոմանց համար՝ անվերջանալի) նախաբանները, միջանկեալ տեղեկութիւնները, գրական-գեղարուեստական մեկնաբանութիւնները, մշակութային եւ պատմական տեղեկութիւնները, որոնց հետեւելով մարդ կարող էր գոլէճի քրեդիտներ ստանալ:

Մանկավարժական այս առաքելութիւնը սկսած էր արդէն Հալէպի դպրոցներու մէջ իր աշխատանքի օրերէն: Երգչախումբի մը մարզուած ըլլալէն ուղղակիօրէն եւ մեծ

Շար.ը էջ 15

# «ՊՈԷԶԻԱՆ ԿԵԱՆՔ Է ԴԱՌՆՈՒՄ, ԵՐԲ ԿԱՊՒՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ, ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ...»*

**(Բանաստեղծ դր. պրոֆ. Արտեմ Յարութիւնեանի հեղինակային երեկոն)**

***Ռ. ԿՈՐԻՒՆ***

Պոէզային նուիրուած երեկոյ էր: Պոէզիան գրականութեան ամենաընդգրկուն ժանրն է, հնչեղ բոլոր ժողովուրդների մօտ: Պոէզիային կեանք տուողը բանաստեղծն է, նա է որ կեանքի վերիվայրումներից ներշնչուելով ստեղծագործում է: Այո՛, բանաստեղծութիւնը կեանքից է բխում, ծիածանուած ու թուխ մթագնած կեանքից: Բանաստեղծութիւնը ծնւում է շնորհալի, տաղանդաւոր եւ քանքարաւոր անհատների մօտ, որոնք խորաթափանց եղելութիւնների ծալքերում ու ծիլերում ինքնաբուխ ու ինքնամոռ , առանց ծեքծեքումների ու նկատառումների ժողովրդի ազատ ու բարօր կեանքի, հայրենիքի ազատութեան ու վերելքի, իշխանութեանց թերացումների ու բացթողումների, հասարակական կեանքի արատների եւ մարդկային արժէքների պահպանման իրենց մտքերն ու մտածումներն են յայտնում նպատակադրուած դէպի վեհն ու վսեմը: Բանաստեղծութեան հայրենասիրական, ժողովրդասիրական ու սիրային սեռն առաւել եւս տարածուած բնոյթ է կրում:

Հեղինակային երեկոյ էր, Կլենտէյլի հանրային գրադարանում, Գալիֆորնիայի Հայ Գրողների Միութեան (ԿՀԳՄ) վարչութիւնը օգտուելով հանրածանօթ բանաստեղծ, Երեւանի Պետական Համալսարանի դասախօս դր. պրոֆ.Արտեմ Յարութիւնեանի ներկայութիւնից Լոս Անճելոսում հրաւիրել էր նրան ներկայացնելու իր պոէզիան:

Օրը Ուրբաթ, Յունուար 20, 2012 թիւ, երեկոյեան ժամը վեց:

Գաղջ երեկոյ՝ աստղավառ երկնքով, սրահում ներկայ էր մտքի ու գրչի, խօսքի ու բանի միութեան անդամներ եւ գրասէր հասարակութիւն:

Նախքան միջոցառման սկսումը պատահեց ցաւալի դէպք, մեր միութեան անդամ՝ հանրածանօթ պրոֆ. Օշին Քէշիշեանին, որը սրտի տագնապի հետեւանքով փոխադրուեց հիւանդանոց, դժբախտ դէպքը ներկաների յուզման պատճառը դարձաւ աղօթելով առ Աստուած շուտափոյթ ապաքինում: Նա երեկոյին ելոյթ պիտի ունենար:

Ձեռնարկի մեկնարկումը կատարեց (ԿՀԳՄ) նախագահ՝ բանաստեղծ Գրիչ Դաւթեանը, նաեւ որպէս հանդիսավար, նախ միութեան առնչուող տեղեկութիւններ փոխանցեց, ապա ներկայացրեց երեկոյի ծրագիրը, Նա Արտեմ Յարութիւնեանին հրաւիրելիս հակիրճ բառերով անդրադարձաւ նրա հեղինակութեան մասին ասելով՝ հանրայայտ բանաստեղծ Ա. Յարութիւնեանը 21-րդ դարի լաւագոյն բանաստեղծներից է, նա իր լեզուաոճի, մտածողութեան եւ գեղարուեստական ըմբռնողութեան շնորհիւ նոր արահետ է բացել մեր բանաստեղծութեան մէջ: Օտար լեզուների իմացութեան շնորհիւ նա լաւատեղեակ է Եւրոպական եւ Ամերիկեան գրականութեանց, նա իր ճաշակով դրանց լաւագոյն հիւթը ներարկում է մեր բանաստեղծութեան մէջ: Յարութիւնեանի գրականութեան մէջ բուռն ոգեղինութեամբ ներկայացուած են ներկայ ժամանակների Հայաստանի եւ Արցախի իրականութիւնները...»:

Բեմ հրաւիրուեց Յարութիւնեանը, նա այսպէս սկսեց իր խօսքը՝ «Բոլոր հանդիպումները սիրոյ եւ այլ տեսակի զգացումներ են առաջացնում ելոյթ ունեցողի մօտ, բայց ես մի քիչ խճողուած եմ, որովհետեւ իմ լաւ բարեկամը, հրաշալի Օշին Քէշիշեանը իրեն վատ է զգացել եւ իրեն տարել են շտապ օգնութեան, որն ինձ շատ տխրեցրեց, յուսով կենսախինդ եւ հումորով լեցուն Օշինը կը յաղթի հիւանդութիւնը»: Նա շարունակելով խօսքը պոէտի առաքելութեան եւ իր մասին ասաց՝ «Ինձ չեմ վերագրում այդ առաքելութիւնը ամբողջովին... Բնաւորութեանս մէջ արմատացած հակումը լուրջ եւ ազնիւ արուեստի հանդէպ ամրապնդուեց նաեւ իմ կենսափորձով: Ես ծնուել եւ դաստիարակուել եմ Արցախում... Հայրս այնտեղ եղել է գրողների միութեան նախագահ: Արցախը նաեւ ինձ խթանեց չդադարող քաղաքական բռնութեան եւ հասարակական խմորումների իրավիճակում պոէզիայով զբաղուելու անհրաժեշտութեամբ: Ես աշխատել եմ Ուաշինկթոնում որպէս ներկայացուցիչ Արցախի կողմից: Արցախի շնորհիւ հասկացայ որ բանաստեղծութիւնը պէտք է լինի ոչ միայն նրբագեղօրէն ճշմարտացի, այլեւ՝ անյաղթահարելի եւ իմաստուն, ոչ թէ միայն ինքնատիպ վարիացիա համաշխարհային թեմաներով, այլեւ՝ հենց աշխարհի պատկերումը: Ես ուզում եմ որպէսզի պոէզիայի պոէտական իւրատիպութիւնը լինի այնքան գործուն, ինչպէս՝ բռունցքի անհամբեր հարուածը, որ մէկէն տալիս ենք չաշխատող հեռուստացոյցի գլխին փորձելով պատկերներ կորզել: Նա իր խօսքի մէջ կարեւորութեամբ շեշտեց պոէզիայի դերի մասին կեանքի տարբեր տեսակի դրսեւորումների նկատմամբ, ապա բանաստեղծութիւնների ընթերցում կատարեց իր՝«Հեռուստապոէմներ «Շուշի» եւ «Բաբելոն» հիւրանոցների աշտարակներից գրքից, որոնք մտածելու եւ խորհելու առիթ հանդիսացան արժանանալով ներկաների գնահատանքին:

Ա. Յարութիւնեանը մինչեւ հիմա հրատարակել է հետեւեալ հատորները՝

«Նշանների երկիր» 1973 թ. «Տեսադաշտ» 1979 թ. «Շեմ» 1984 թ. «Ներկայութեան խօսքեր» 1988 թ. «Հրդեհը հինաւուրց հողի» 1993 թ. «Նամակ Նոյին» 1997 թ. «Յուդայի արձակուրդը» 2003 թ. «Հեռուստապոէմներ «Շուշի» եւ «Բաբելոն» հիւրանոցների աշտարակից 2010 թ. : Մի շարք թարգմանութիւններից յիշենք՝ Փիթեր Բալաքեանի՝ «Ճակատագրի սեւ շունը» 2002 թ. «Ընտրանի ամերիկեան եւ անգլիական պոէզիայի» 2005 թ.:

Նա անդամներ մրցանակների եւ պատուագրերի է արժանացել, նոյնիսկ ներկայացուել է Նոպելեան մրցանակի:

Ամբիոն հրաւիրուեց՝ Լոս Անճելոսի UCLA համալսարանի Մերձաւոր Արեւելքի Լեզուների եւ Մշակոյթի «Նարեկացի» ամպիոնի տնօրէն պրոֆ. Փիթեր Քաուին: Նա իր խնամքով պատրաստուած զեկոյցի սկզբում առաջարկում է հեղինակին բանաստեղծութիւնների խտասալի-

Շար.ը էջ 19

# ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԳԻՇԵՐԸ ՉԱՐԼԻ ՉԱՊԼԻՆԻ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԸ ԴՍՏԵՐԸ՝ ՋԵՐԱԼԴԻՆԱՅԻՆ

*Ես չեմ եղել հրեշտակ, բայց որքան կարողացել եմ՝ ձգտել եմ լինել մարդ: Փորձիր եւ դու:*

*Դստրիկս,*

*Հիմա գիշեր է: Ծննդեան գիշեր: Իմ փոքրիկ ամրոցի բոլոր անզէն պահապանները քնել են: Քնած են եւ եղբայրդ ու քոյրդ: Նոյնիսկ մայրդ արդէն քնել է: Ես քիչ մնաց արթնացնէի այդ նիրհող թռչնակներին՝ մինչեւ կը հասնէի իմ այս աղօտ լուսաւորուած սենեակը:*

*Ինչքան հեռու եմ քեզանից, բայց թող կ՚ուրանան աչքերս, թէ քո պատկերը, թէեւ կ՚ուզէի մի ակնթարթ, հեռանում է աչքիս առաջից: Նա այնտեղ է, իմ սեղանին, այստեղ՝ սրտիս մէջ: Այդտեղ, հեքիաթային Փարիզում, դու պարում ես փառահեղ Թատրոնի բեմահարթակի վրայ, Ելիսեյան դաշտերում:*

*Ես դա լաւ գիտեմ, եւ ինձ թւում է, գիշերուայ այս լռութեան մէջ լսում եմ քո քայլերը, տեսնում եմ քո աչքերը, որ փայլում են ինչպէս աստղերը ձմեռային գիշերում: Ես լսել եմ, որ դու այդ տօնական ու շողշողուն ներկայացման մէջ կատարում ես դերը պարսկական գեղեցկուհու, որը գերուած է թաթարական խանից: Գեղեցկուհի՛ եղիր եւ պարիր, ա՛ստղ եղիր եւ փայլիր, բայց եթէ հանդիսատեսի ցնծութիւնն ու շնորհակալութեան խօսքերն արբեցնեն քեզ, եթէ գլուխդ պտոյտ գայ քեզ ընծայուած ծաղիկների բոյրից, ապա քաշուիր մի անկիւն եւ կարդայ իմ նամակը, ունկնդիր եղիր հօրդ ձայնին.*

*Ես քո հայրն եմ, Ջերալդինա:*

*Ես՝ Չարլին, Չարլի Չապլինը:*

*Գիտե՞ս, թէ քանի գիշերներ եմ անցկացրել քո մահճակալի մօտ, երբ դու փոքր էիր. քեզ հեքիաթներ էի պատմում եւ՝ քնած գեղեցկուհու, եւ՝ մշտարթուն վիշապի մասին: Իսկ երբ քունը իջնում էր իմ ծերացող աչքերին, ես ծիծաղում էի նրա վրայ ու ասում. «Հեռացի՛ր, իմ քունը իմ աղջկայ երազանքներն են»: Ես տեսնում էի քո այդ երազանքները, Ջերալդինա, տեսնում էի քո ապագան, քո այսօրը.*

*Ես տեսնում էի բեմահարթակի վրայ խաղացող մի աղջկայ, երկնքում ճախրող մի փերու: Լսում էի, ինչպէս մարդիկ ասում են. «Տեսնու՛մ էք այս օրիորդին: Սա այն ծեր ծաղրածուի աղջիկն է: Յիշու՛մ էք ինչ էր նրա անունը՝ Չարլի»:*

*Այսօր հերթը քոնն է: Պարի՜ր: Ես պարում էի լայն պատառոտուած անդրավարտիքով, իսկ դու պարում ես արքայադստեր մետաքսեայ հագուստով: Այդ պարերն ու ծափահարութիւնների որոտը քեզ երկինք կը հանեն: Բարձրացի՜ր: Բարձրացիր այնտեղ, աղջիկս, բայց եւ վերադարձիր երկիր, դու պէտք է տեսնես, ինչպէս են ապրում մարդիկ, ինչպէս են ապրում այն ծայրամասերի փողոցի պարուհիները. Նրանք պարում են ցրտից եւ սովից դողալով: Ես այնպիսին եմ եղել, ինչպիսին նրանք են, Ջերալդինա: Այն գիշերները, այն կախարդական գիշերները, երբ դու քնում էիր՝ օրօրուելով իմ հեքիաթներից, ես չէի քնում. Ես նայում էի քո դէմքին, լսում էի քո սրտի զարկերը եւ ինձ հարց էի տալիս. «Չարլի, միթէ՞ այս փիսիկը կը ճանաչի քեզ երբեւէ»: Դու ինձ չես ճանաչում Ջերալդինա… ես շատ հեքիաթներ եմ պատմել քեզ այն երկար գիշերներին, բայց իմը, իմ հեքիաթը՝ չեմ պատմել: Իսկ դա նոյնպէս հետաքրքիր է: Հեքիաթ՝ քաղցած ծաղրածուի մասին, որ պարում ու երգում էր Լոնտոնի աղքատ թաղամասերում, իսկ ապա… ողորմածութիւն հայցում…*

*Ահա նա իմ, հեքիաթը: Ես գիտեմ ինչ բան է սովը, ինչ է անօթեւան լինելը: Դեռ աւելին՝ ես ճաշակել եմ ստորացնող մորմոքը այն թափառական ծաղրածուի, որի կրծքի տակ փոթորկւում է հպարտութեան մի ամբողջ ովկիանոս եւ այդ հպարտութիւնը մեռցնում էին նետած դրամները… եւ չնայած այդ ամէնին ես ապրում եմ, իսկ ապրողների մասին սովորաբար քիչ է խօսւում:*

*Աւելի լաւ է խօսենք քո մասին:*

*Քո անուանը, Ջերալդինա, հետեւում է իմը՝ Չապլին: Այդ անունով ես աւելի քան քառասուն տարի ծիծաղեցրել եմ մարդկանց:*

*Բայց ես աւելի լաց եմ եղել, քան նրանք ծիծաղել են: Ջերալդինա, այն աշխարհում, որտեղ ապրում ես դու, միայն պարերն ու երաժշտութիւնը չէ,որ գոյութիւն ունեն:*

*Կէս գիշերին, երբ դու դուրս ես գալիս մեծ դահլիճից, կարող ես մոռանալ քո հարուստ երկրպագուներին, բայց մի՛ մոռանայ այն տաքսու վարորդին, որը քեզ տուն է տանում, հարցրու նրա կնոջ մասին… Եւ եթէ նա յղի է, եթէ նրանք փող չունեն երեխայի համար շապիկներ գնելու, փող դիր նրա ձեռքը: Ես կարգադրել եմ, որպէսզի պանքում վճարեն քո այդօրինակ ծախսերը: Իսկ ինչ մնում է միւսներին, դու նրանց վճարիր ճիշտ հաշուով: Ժամանակ առ ժամանակ օգտուիր մետրոյից, կամ շրջիր աւտոբուսով եւ շատ աւելի յաճախ քայլիր ոտքով, դիտիր քաղաքը: Զննի՛ր մարդկանց, նայիր այրիներին եւ որբերին եւ գոնէ օրը մէկ անգամ ասա ինքդ քեզ. «Ես այնպիսին եմ, ինչպիսին նրանք են»: Այո, դու հէնց այդպիսին ես, ինչպիսին նրանք են, դստրիկս: Եւ նոյնիսկ աւելի պակաս: Արուեստը, նախքան մարդուն թեւեր տալը, որպէսզի նա կարողանայ ճախրել ամպերից վեր, սովորաբար կոտրում է նրա ոտքերը: Եւ, եթէ գայ այն պահը, երբ դու քեզ վեր կը զգաս հասարակութիւնից, անմիջապէս թո՛ղ բեմը: Նստիր առաջին իսկ պատահած տաքսին եւ գնայ Փարիզի արուարձանները: Դրանք ինձ շատ լաւ ծանօթ են: Դու այնտեղ կը տեսնես շատ պարուհիների, այնպիսիններին, ինչպիսին դու ես, նոյնիսկ աւելի գեղեցիկները, աւելի նազելիները, աւելի հպարտները, քան դու ես: Քո թատրոնի լուսարձակների կուրացուցիչ լոյսերը այնտեղ չկան:*

*Նրանց լուսարձակը լուսինն է:*

*Նայի՜ր, ուշադի՛ր նայիր: Չի՞ թւում քեզ արդեօք, որ նրանք քեզանից աւելի լաւ են պարում: Խոստովանի՛ր, խոստովանի՛ր, աղջիկս: Միշտ էլ կը գտնուի մէկը, որ քեզանից լաւ կը պարի եւ քեզանից լաւ կը խաղայ: Եւ յիշիր, Չարլիի ընտանիքում չի եղել այնքան անտաշ մէկը, որ հայհոյէր կառապանին կամ ծաղրէր Սենայի ափին նստած աղքատին:*

*Ես պիտի մեռնեմ, բայց դու պիտի ապրես… Ես ուզում եմ, որ դու երբեք չիմանայիր ինչ բան է աղքատութիւնը:*

*Այս նամակի հետ քեզ ուղարկում եմ չլրացուած դրամական չէք, որպէսզի դու կարողանաս ծախսել այնքան, որքան ցանկանում ես:*

*Բայց երբ ծախսես երկու ֆրանկ, մի՛ մոռացիր յիշեցնել քեզ, որ երրորդը քոնը չէ, նա պէտք է պատկանի այն անծանօթին, որն ունի դրա կարիքը: Իսկ դու հեշտութեամբ կը գտնես այդպիսի մէկին: Ես քեզ հետ խօսում եմ փողի մասին, որովհետեւ գիտեմ նրա դիւային ուժը: Գիտես, ես շատ ժամանակ եմ անցկացրել կրկեսում եւ միշտ երկիւղ եմ զգացել լարախաղացների համար: Բայց պէտք է քեզ, աղջիկս ասեմ մի ճշմարտութիւն.*

*Մարդիկ գետնի վրայ աւելի՛ անհաստատ են, քան լարախաղացները՝ երերուն լարի վրայ: Գուցէ կարող է պատահել այս երեկոյ քեզ կ՚ուրացնի մի թանկագին ադամանդի փայլը, հենց դա էլ կը լինի քո անյուսալի պարանը, եւ քո անկումն անխուսափելի է: Կարող է պատահել մի գեղեցիկ օր գերուես ինչոր արքայազնի գեղեցկութեամբ, այդ պահին դու կը դառնաս մի անփորձ լարախաղաց, իսկ անփորձները միշտ ընկնում են: Մի վաճառիր սիրտդ ոսկով ու զարդարանքներով, գիտցիր, որ ամենամեծ ադամանդը արեւն է: Բարեբախտաբար նա լուսաւորում է բոլորին: Եւ երբ, մի գեղեցիկ օր, սիրահարուես մէկն ու մէկին, ապա նուիրուիր նրան մինչեւ վերջ: Ես ասել եմ մօրդ, որպէսզի նա այդ մասին գրի քեզ: Նա սէրը աւելի լաւ գիտի քան ես, նրան աւելի վայել է խօսել այդ մասին…*

*Քո աշխատանքը շատ ծանր է, ես գիտեմ, քո մարմինը ծածկուած է մի կտոր մետաքսով: Յանուն արուեստի կարելի է յայտնուել բեմի վրայ նաեւ մերկ, բայց այնտեղից պէտք է վերադառնալ հագնուած եւ մաքրուած: Ոչինչ եւ ոչ ոք այս աշխարհում արժանի չէ այն բանին, որպէսզի տեսնի աղջկայ նոյնիսկ ոտքերի եղունգները: Մերկութիւնը մեր ժամանակի ախտն է: Ես ծեր եմ, եւ իմ խօսքերը, հնարաւոր է, ծիծաղելի են հնչում:*

*Բայց, իմ կարծիքով, քո մերկ մարմինը պէտք է պատկանի նրան, ով կը սիրի քո մերկ հոգին: Սարսափելի ոչինչ չկայ, եթէ քո համոզմունքները այս հարցում տասնեակ տարիների վաղեմութիւն ունենան, եթէ այն պատկանի անցած ժամանակին:*

*Մ՛ի վախեցիր, այդ տասնեակ տարիները չեն ծերացնի քեզ, բայց ինչ էլ ուզում է լինի, ես ցանկանում եմ, որ դու լինես վերջինը նրանցից, ովքեր կը դառնան տկլորների կղզու հպատակը:*

*Ես գիտեմ, որ հայրերի եւ որդիների միջեւ գնում է յաւերժական մենամարտ: Ինձ հետ, իմ մտքեր հետ կռուիր, աղջիկս: Ես չեմ սիրում հնազանդ երեխաներ, եւ քանի դեռ աչքերիցս արցունքներ չեն կաթել այս տողերի վրայ, ուզում եմ հաւատալ, ծննդեան այս գիշերը հրաշալիքների գիշեր է: Ես կը ցանկանայի, որպէսզի հրաշք կատարուէր, որ դու իսկապէս հասկանայիր այն բոլորը, ինչ ցանկացայ ասել քեզ:*

*Չարլին արդէն ծերացել է Ջերալդինա: Վաղ թէ ուշ բեմական սպիտակ մետաքսի փոխարէն ստիպուած պիտի լինես սեւ զգեստ հագնել, որպէսզի գաս իմ գերեզմանին: Այժմ ես չեմ ուզում վշտացնել քեզ: Միայն ժամանակ առ ժամանակ նայիր հայելուն, այնտեղ դու ինձ կը տեսնես: Քո երակներով իմ արիւնն է հոսում: Նոյնիսկ այն ժամանակ, երբ արիւնը կը սառչի իմ երակներում, ես կ՚ուզենայի, որ դու չմոռանաս հօրդ՝ Չարլիին:*

*Ես չեմ եղել հրեշտակ, բայց որքան կարողացել եմ՝ ձգտել եմ լինել մարդ:*

*Փորձիր եւ դու:*

*Համբուրում եմ քեզ:*

*Չարլի:*

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* $50,00 for USA
* $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.
* $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.
Name: ----------------------------------------------
Address: -----------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: -------------
Tel :---------------------- Fax : --------------------------

# ՍԻՆԵՄԱՇԽԱՐՀԻ ԼՈՒՐԵՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՖԻԼՄ ՄԸ՝ «ԵԹԷ ԲՈԼՈՐԸ»

*Անցեալ Զորեքշաբթի Երեւանի մէջ լրագրողներուն ներկայացուեցաւ «Եթէ բոլորը» անունով հայկական գեղարուեստական նոր ֆիլմ մը: Հայ եւ ռուս շարժապատկերի գործիչներու կողմէ երկու տարուան ընթացքին պատրաստուած սոյն ֆիլմի բեմադրիչն է Միքայէլ Պօղոսեանը: Ան գեղեցիկ եւ յուզիչ կերպով կը պատմէ Ղարաբաղի պատերազմի ընթացքին զոհուած ռուս սպայի աղջկան եւ հայ ազատամարտիկներու մասին: Սարաթովէն Հայաստան եկած աղջիկը, որուն կերպարը մարմնաւորած է ռուս երիտասարդ երասանուհի Եկատերինա Շիտովան, իր հօր մահէն քսան տարի անց, կը փորձէ գտնել անոր գերեզմանը եւ տնկել իր հետ բերած բարտիի տունկը:*

*«Ֆիլմը կարծես թէ պատերազմական թեմայի շուրջ է, բայց խաղաղութեան մասին է» ըսաւ Միքայէլ Պօղոսեանը:*

*Ֆիլմի առաջին ցուցադրումիւնը տեղի ունեցաւ Երեւանի «Մոսկուա» սինեմային մէջ: Ան պիտի ցուցադրուի նաեւ Ստեփանակերտի եւ Մոսկուայի մէջ: Այնուհետեւ կը մասնակցի միջազգային փառատօներու:*

## ԱՆՃԵԼԻՆԱ ՃՈԼԻԻ ՆՈՐ ՖԻԼՄԸ ՍՈՒՐ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ Կ'ԵՆԹԱՐԿՈՒԻ

*Հոլիվուտի նշանաւոր աստղերէն Անճելինա Ճոլիի բեմադրած նոր ֆիլմը՝ «Արեան եւ Մեղրի Երկրին մէջ» անունով կը պատմէ պոսնիացի աղջկայ եւ սերպ զինուորի սիրոյ պատմութեան մասին, 1992-1995 թուականներու պոսնիական պատերազմի ընթացքին: Ներկայիս այս ֆիլմի ենթարկուած է թէ սերպերու եւ թէ պոսնիացիներու քննադատութեան:*

*Արդարեւ երբ Եուկոսլաւիան մասնատուեցաւ, տեղի ունեցած արիւնալի իրադարձութիւններու ժամանակ զոհուեցան շուրջ 100 հազար հոգի:*

*Որպէս ՄԱԿ-ի բարի կամքի դեսպան՝ Անճելինա Ճոլին, բազմաթիւ անգամներ եղած է հակամարտութեանց գօտիին մէջ եւ օգնած փախստականներուն: Ճիշդ այդ ժամանակ իր մէջ ծագած է ֆիլմ մը պատրաստելու գաղափարը:*

*Շատեր դժգոհ են որ Անճելինա Ճոլին իրենց ողբերգութիւնը վերածած է հոլիվուտեան սիրավէպի:*

*Ներկայիս, սերպ մամուլը կը մեղադրէ Ճոլին, անիրաւ կերպով սերպերը նսեմացնելու եւ հակասերպական տեսանկիւն ողդեգրելուն մէջ:*

## «ՈՍԿԷ ԱՐԾԻՒ»Ի ԳԼԽԱՒՈՐ ԴԱՓՆԵԿԻՐՆ Է «ԵԼԵՆԱ» ՖԻԼՄԸ

*Ռուսաստանեան «Ոսկէ Արծիւ» շարժանկարային մրցանակի գլխաւոր դափնեկիրն է Անտրէյ Զվագինձեւի «Ելենա» ֆիլմը: Իսկ լաւագոյն սենարիոյի մրցանակին արժանացած է Ալեքսանդր Մինդաձէն, «Շաբաթ Օրը» ֆիլմին համար:*

*Իսկ անցեալ տարուան լաւագոյն արտասահմանեան ֆիլմ ճանչցուած է բոլոր մրցանակաբաշխութիւններուն մէջ առաջնութեան արժանացած եւ չորս օսկարներու տարած «Արքայի Ելոյթը» (The Kings Speach) շարժանկարը:*

*Լաւագոյն հեռուստասերիալ ճանչցուած է Անտրէյ Մալեուկովի «Փախուստ»ը:*

## «ՀԱՅԱՍՏԱՆ ԻՄ ԹՄՐԱՆԻՒԹՆ Է»

*Լիթվիացի ֆիլմարտադրիչ Լիւտմիլա Կազկանը հայերու մասին ֆիլմի մը պատրաստութեան նախագիծը մշակած է: Ան սկսած է «Սիրտ իմ, Հայաստան» ֆիլմի նախապատրաստական աշխատանքներուն:*

*Այս առթիւ լիթվացի կինը «Առաւօտ» թերթի թղթակիցին հետ ունեցած մէկ հարցազրոյցի ընթացքին ըսած է. «1988ին, առաջին անգամ չորս տարեկան աղջկանս հետ Հայաստան եկայ: Երեւանի մէջ զիս հիւրընկալող ընտանիքի մայրը՝ սրտի խնդիր ունէր: Ես միջնորդեցի որ Վիլնիուսի մէջ, կատարուի սրտի փոխպատուաստումը: Այդպիսով հարազատ դարձան...: Յաճախ Հայաստան կու գամ: Ձեր երկիրը մշտապէս զիս կ'ապշեցնէ: Հայաստանը կարծես ինծի համար թմրանիւթ ըլլայ: Ի դէպ՝ «Սիրտ իմ, Հայաստան» ֆիլմի գաղափարն ինծի յուշողները լիթվացի ընկերներս են» կ'ըսէ տիկին Կաչկանը:*

## 13 ՖԻԼՄԵՐ ՕՍԳԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ

*Շարժապատկերի Արուեստներու եւ գիտութեան Ակադեմիան յայտարեց յառաջիկայ ամիս տեղի ունենալիք Օսգարի այս տարուան մրցանակաբաշխութեան թեկնածու լաւագոյն ֆիլմերու անուանացանկը: Ներկայացուած 103 թեկնածուներուն մէջէն լաւագոյններէն կը համարուին «Hugo»ն, «The Artist», «Moneball», «War Horse», «Midnight in Paris», «The Help» եւ «The Tree of Life» ֆիլմերը:*




## ԴԵՂՁԻ ՕԳՏԱԿԱՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Դեղձը հարուստ է բազմաթիւ վիտամիններով եւ հանքային նիւթերով: Մէկ դեղձի մէջ պարունակում է օրուան ընթացքում մարդուն անհրաժեշտ վիտամին C-ի 3/4-ը: Պարունակում է նաեւ արիւնատար անօթների համար կարեւոր քարոդին, ֆոսֆոր, երկաթի աղեր եւ կալիում, որը լաւացնում է յիշողութիւնը, բարձրացնում աշխատունակութիւնը: Բացի դրանից, դեղձը բարձրացնում է տոնուսը եւ օգնում է յաղթահարել դեպրոսիան: Դեղձը խորհուրդ է տրւում նրանց, ովքեր ունեն սրտային ռիթմի խանգարումներ, արեան պակաս, անեմիա, ստամոքսի հիւանդութիւնների՝ թթուայնութեան նուազմամբ պայմանաւորուած: Նրանք, ովքեր ունեն խնդիրներ ստամոքսի հետ, խորհուրդ է տրւում խմել 50 կրամ դեղձի հիւթ, ուտելուց 15-20 րոպէ առաջ: Այս միրգն օգտակար է նաեւ նրանց համար, ովքեր հետեւում են իրենց մաշկին: Դեղձն աւելի ճկուն է դարձնում մաշկը եւ ուշացնում է կնճիռների առաջացումը: Միրգը հարուստ է A, B, C վիտամիններով: Նրա բաղադրութեան 11%-ը ածխաջրեր են: Դրանից հետեւութիւն, որ շաքարային դիապետ ունեցողներին դեղձը խորհուրդ չի տրւում: Միջին չափի մէկ դեղձի մէջ պարունակում է 35 քալորիա:*

**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինկսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
(818) 246-0125

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

BURBANK-GLENDALE-PASADENA AIRPORT AUTHORITY
ENGINEERING GROUP

**INVITATION FOR BIDS**

Original Project E10-35; Revised to Project E10-35-(I)-A
**Regional Intermodal Transportation Center, Consolidated Rental Car Facility, Elevated Walkway, Site Work, Off-Site Work & Site Preparation for Replacement Parking Structure**
Project Type & Description:
New Construction
Issued for Bid:
January 20, 2012

Visit:
ARC/Ford Graphics;
Region 3 Website;
http://socal.fordgraphics.com
glendale@e-arc.com
818-241-4181
Pasadena@e-arc.com
626-583-1122

**NOTICE TO PREQUALIFIED GENERAL CONTRACTORS & ALL INTERESTED CONTRACTORS & VENDORS, SUPPLIERS, CONTRACTORS & CONSULTANTS**
The Bob Hope Airport hereby extends an invitation to the nine (9) Prequalified and Eligible General Contractors and to all interested contractors, consultants, vendors & suppliers to attend a Pre-Bid/Job Walk on February 2, 2012 at 10:00AM for Project E10-35-(I)-A. This meeting is mandatory for the Prequalified and Eligible General Contractors; it is not mandatory for potential subcontractors, subconsultants, vendors, suppliers; however, attendance is strongly encouraged.

Meeting Date & Time:
**10:00 A.M. - 12:00 P.M., FEBRUARY 2, 2012**
Location:
**Bob Hope Airport, Main Terminal, Skyroom**
**2627 Hollywood Way**
**Burbank, CA 91505**
(parking is available in the parking structure next to the main terminal, on the roof level only – validation will be provided)

**OUTREACH**
In addition to providing information about Project E10-35-(I)-A, the meeting is designed to facilitate the process whereby all subcontractors, including DBEs and Tri-Cities businesses have the opportunity to interface with the Prequalified and Eligible General Contractors.

## ՓՐՈՖ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

*Շարունակուած էջ 1-էն*

ընկերային, հակաժողովրդավարական, Աստուածաբանական, երկրէն ներս ապրող փոքրամասնութիւններու միջեւ գոյութիւն ունեցող անհաւասարութիւնը, անոնց ազգային ինքնութեան կորուստի եւ թրքացման անհրաժեշտութիւնը, հոն տիրող քաղաքական ու տնտեսական ճգնաժամերու առկայութիւնը, ցեղասպանութիւններ կատարելու պատերազմի ընտրանքը, եւայլն...

Փրոֆ. Գէորգ Խրլոպեան իր գիտական մօտեցումով հիմք դրաւ հայոց դէմ գործադրուած Ցեղասպանագիտութեան, որուն խորապէս վերլուծուած դրոյթները մանրամասնօրէն տեղ տուած են 2006. թ լոյս ընծայած «Ցեղասպանագիտութիւն» մեծածաւալ գրքին մէջ: Կը գրէ ան. «Հայոց Ցեղասպանութիւնը ուրացողները, կը ձգտին լռեցնել հայ հողի կանչը ու չէզոքացնել այդ կանչը լսելու եւ հասկնալու արդի հայ մարդու կարողականութիւնը: Արդի Ցեղասպանագիտութիւնը կը յաղթահարի նաեւ այդ վտանգը»:

Համաձայն Փրոֆ. Խրլոպեանին, «Այսօր հայ ժողովուրդի առաջ ծառացած են խիստ ինքնատիպ ու համադրուած կառոյցներ, խնդիրներ, որոնք պահանջում են նոր, ոչ-աւանդական, հնարամիտ, ստեղծագործ, նկուն եւ համարձակ լուծումներ, ի մասնաւորի իրաւական, դիւանագիտական ու քաղաքական»:

Մեծ եղաւ Փրոֆ. Գէորգ Խրլոպեանի բարձրորակ ներդրումը հայ ժողովուրդը յուզող վերջին դարու բազմաբնոյթ պատմական իրադարձութիւններու վերլուծման գիտական բնագաւառէն ներս: Ցարգանք իր վաստակին: Այս մօտեցումով կը խոնարհինք իր անթառամ յիշատակին առջեւ, Իր մահուան երկրորդ տարելիցին տխուր առիթով, այն հաստատ ակնկալութեամբ, որ ազգովին պիտի մտածուի, իր անձնական անտիպ գործերը հրատարակելու մասին:

## ՔՈՉԱՐԵԱՆԻ ԹԻՐԱԽԸ 18-Ն Է

*Շարունակուած էջ 2-էն*

*առաջ հենց Վարդան Օսկանեանն էր, որ յայտարարեց, թէ իր ենթադրութեամբ, Ռոբերտ Քոչարեանը որեւէ կերպ ներգրաւուած կ'ունենայ խորհրդարանի ընտրութեանը:*

*Ահա այդ իմաստով, Օսկանեանն իր անունով, բայց թերեւս Քոչարեանի անունից զգուշացնում է Սարգսեանին: Հնարաւոր է նաեւ, որ այդ զգուշացումը ոչ միայն ներառում է ԲՀԿ-ին հանգիստ թողնելու տեքստ, այլ աւելին՝ խորհրդարանի ընտրութեանը Քոչարեանի հետ պայմանաւորուելու ազդակ, կոչ կամ յորդոր:*

*Առայժմ, Սարգսեանը գրեթէ նոյնքան բաց տեքստով ցոյց է տալիս, որ մտադիր չէ պայմանաւորուել որեւէ մէկի հետ:*

*Թէ ինչն է նրա ինքնավստահութեան աղբիւրը, դժուար է ասել: Կամ նա վստահ է, որ Քոչարեանը զգուշացումից այն կողմ չի անցնի եւ ստիպուած կը լինի համակերպուել իրավիճակին, կամ Սարգսեանն ունի Մինսկի խմբի համանախագահների անվերապահ աջակցութիւնն իշխանութեան հարցում, կամ էլ նա պատրաստւում է համակարգային վերանայումների իսկապէս աննախադէպ քայլերի գնալ, դիմել հանրութեանը եւ ստանալ աջակցութիւն: Միգուցէ բոլորը միանգամից:*

*Փաստն առայժմ այն է, որ Սարգսեանը մեծացնում է ճնշումը ԲՀԿ վրայ, միգուցէ նաեւ այն պատճառով, որ Քոչարեանը նրա առաջ դնում է ոչ թէ պայմանաւորուելու, այլ պարզապէս իշխանութիւնը յանձնելու պայման:*

*Սակայն, հնարաւոր է նաեւ, որ խօսքը ոչ այնքան 2012-13 թուականներին այդ «ընդունման-յանձնման» ակտը կնքելն է՝ ի դէմս ընտրական փուլի պաշտօնական արդիւնքների, որքան այդ փուլից սկսած իշխանութիւնը Ռոբերտ Քոչարեանին վերադարձնելը՝ 2017-18 փուլի ընթացքում:*

*Թերեւս անկասկած է, որ իշխանութիւնը Հայաստանում, ինչպէս ոչ դեմոկրատական բոլոր երկրներում, սկսում է ժառանգորդին ընտրելով, եւ աւարտւում է ժառանգորդ ընտրելու իրաւունքից զրկուելով:*

*«ԼՐԱԳԻՐ»*

## ՄՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՅԼԱՐՇԱՒ

*Շարունակուած էջ 7-էն*

*Ահա այս երեկոն լաւագոյն առիթը պիտի ըլլայ ընտանիքներուն քով քովի գալու սիրով եւ համերաշխութեամբ: Լաւագոյն առիթը մեր ցաւերը բուժելու եւ Քրիստոսի սիրովը լեցուելու:*

*Արարողութեան աւարտին տեղի պիտի ունենայ արձանագրութիւն: Բոլոր անոնք որոնք կը փափաքին մաս կազմելու Տնային Բռնութեան դէմ կատարուելիք աշխատանքներու ծառայութեան, թող բարի ըլլան իրենց անունները արձանագրել:*

*Ժամանակացոյց:*

*- Կ.Ե. 4:00-ին մոմավառութիւն եւ քայլարշաւ Կլէյնտէյլի Սբ. Պետրոս Եկեղեցիէն (632 W. Stocker St., Glendale, CA), դէպի Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճար (3325 N. Glenoaks Blvd., Burbank):*

*- Կ.Ե. 6:30-ին Տեառնընդառաջի արարողութիւն Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, Առաջնորդ:*

*- Կ.Ե. 7:00-ին Սրբազան հօր պատգամը ուխտաւորներուն եւ հայ ընտանիքներուն:*

*- Կ.Ե. 7:30-ին խառոյկահանդէս եւ արձանագրութիւն:*

*Արարողութեան աւարտին փոխադրամիջոցները վերադարձ դէպի Սբ. Պետրոս Եկեղեցի ապահովուած են:*

massispost.com
daily news updates

## ՇԱԽՄԱՏԻՍՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 2-էն*

*տեցումներ, պայմանաւորուածութիւններ ձեռք բերել գոնէ ընտրութիւնների ընթացքը վերահսկելու համար:*

*Գործող իշխանութեան հիմնական խնդիրն այսօր այսպէս կոչուած ռոբերտքոչարեանական թեւում ԲՀԿ-ի շուրջը քաղաքական բիւրեղացում թոյլ չտալն է: Որովհետեւ եթէ դա տեղի ունենայ, ապա իրեն 2/3-ով սպառած տէրպետրոսեանական թեւի՝ ՀԱԿ-ի ֆոնին թէ ընտրողների եւ թէ այս թեւում գործող ուժերի համար ԲՀԿ-ն աւելի նախընտրելի է լինելու: Իսկ դա գրեթէ զրոյացնելու է ՀՀԿ-ի՝ բացարձակ մեծամասնութիւն կազմելու շանսերը:*

*Իսկ որպէսզի դա բացառուի, նախագահն սկսում է օգտագործել այս թեւի ամենաթոյլ եւ խոցելի կողմը՝ ԲՀԿ-ի բովանդակութիւնը: Չունենալով գաղափարական առանցք՝ այս կուսակցութեան լինելիութիւնը պայմանաւորւում է իբրեւ իշխանութեան մասը կամ կցորդը լինելու հանգամանքով: Գաղափարազրկութիւնը փոխհատուցուել է՝ կուսակցութիւնը զանգուածային դարձնելով, ինչն էլ իր հերթին հանգեցրել է նրան, որ ԲՀԿ-ն դարձել է մեծ թուով պատեհապաշտների, իրենց բիզնեսը ապահովագրել ցանկացող օլիգարխիկ շրջանակների, կարիերիստների հանգրուանն ու ինքնադրսեւորման միակ միջոցը: Դա հրաշալի գիտեն նաեւ իշխանութիւնները: Եւ բաւական է ընդամէնը այս մարդկանց մէջ թէ ԲՀԿ-ի ապագայի եւ թէ նրա լիդերի նկատմամբ համապատասխան դոզայով վախ, անվստահութիւն եւ գլխաւորը՝ անապահովութեան զգացում ներշնչել եւ կուսակցութիւնն ուղղակի փուլ կը գայ թղթէ խաղաքարտերից սարքուած տան նման:*

*Բայց խնդրի ողջ նրբութիւնն այն է, որ նախագահին ձեռնտու չէ նաեւ այս կուսակցութեան վերջնական փլուզումը: Որովհետեւ մի կողմից նա ստիպուած է լինելու գործ ունենալու ասպարէզից ԲՀԿ-ի հեռացման հետեւանքով այլ ուժերի կողմից լցուելու եւ նրանց հետ յարաբերուելու խնդրի հետ, իսկ միւս կողմից՝ կանգնելու է ԲՀԿ-ում կուտակուած մարդկային ու յատկապէս ֆինանսական ռեսուրսները փոշիացումից փրկելու դժուարութիւնների առջեւ: Այնպես որ Սերժ Սարգսեանի համար նախընտրելի է այնպիսի որակի ԲՀԿ, որը հեշտ հունցուող խմորի նման կարող է ձեւափոխուել իրեն յարմար տարբերակներով: Այսպիսի ԲՀԿ-ի գոյութիւնը վերացնում է քաղաքական դաշտում խոշոր, այլընտրանքային միաւորումների ստեղծման նախադրեալները:*

*Եթէ Սերժ Սարգսեանին յաջողուի լուծել այս խնդիրը, ապա ընտրապայքարում տէրպետրոսեանական եւ քոչարեանական համեմատաբար թոյլ թեւերի պայքարի սլաքները կ'ուղղի միմիանց դէմ՝ եւ հանրութեանը կը ներկայանայ ոչ միայն իբրեւ մրցակցութիւնից դուրս, այլեւ երկու ծայրահեղ բեւեռների համեմատ աւելի նախընտրելի կողմ: Սա մարտավարութիւն է, որն այս պահին սկսել է կիրառել նրա թիմը:*

*2. Սերժ Սարգսեանի երկրորդ գլխաւոր ձեռքբերումն այն էր, որ նա, օգտագործելով ԼՂ հիմնահարցը եւ յատկապէս հայ-թրքական թնճուկը, օրակարգից առժամանակ հանել է իր արտաքին լեգիտիմութեան ճգնաժամի հարցը: Նա տարածաշրջանում շահեր ունեցող բոլոր ուժային կենտրոններին կարողացաւ արտաքուստ ներկայանալ իբրեւ վերափոխուելու, համարձակ որոշումներ կայացնելու եւ կատարելու, բայց որ շատ աւելի կարեւոր է՝ միջազգային հանրութեան կարծիքի նկատմամբ աւելի զգայուն լիդերի կերպարով: Նա փաստացի մարմնաւորում է Հայաստանի հարցում Ռուսաստանի եւ Արեւմուտքի կոնսենսուսային տարբերակ: Եւ չնայած պարզ է, որ այս ամէնն ընդամէնը իմիտացիա էր ու բեմադրութիւն, սակայն որպէս մարտավարութիւն, իրեն լիովին արդարացրեց:*

*Այլ կերպ ասած՝ Սերժ Սարգսեանն իր թիմով կարողացաւ շահել միջազգային հանրութեան վստահութիւնը: Այդ կապիտալն օգտագործելով նա հիմա համոզւում է, թէ կարող է անցկացնել ժողովրդավարական ընտրութիւններ՝ իրականում չտալով դրա որեւէ յատակ երաշխիք:*

*Այս գործօնն, իհարկէ, երկրորդական է, որովհետեւ ոչ ոք չի կարող ասել, թէ արտաքին սպասելիքները չարդարացնելու դէպքում ինչ հնարաւոր խնդիրների առջեւ է նա կանգնելու եւ կանգնեցնելու ողջ երկիրը եւ արդեօք կը կարողանա՞յ ոչ լեգիտիմութեան բեռն ուսերին գնալ նախագահական ընտրութիւններին: Սակայն ստարտային վիճակում արտաքին աջակցութիւնը ՀՀԿ-ին կարեւոր հոգեբանական առաւելութիւն է տալիս՝ ձեւաւորելով այն մտայնութիւնը, թէ նման աջակցութեան պարագայում հակազդելու, ուժեղ այլընտրանքային միաւորումներ ստեղծելու բոլոր նախաձեռնութիւններն անիմաստ են: Ներկայումս ողջ հասարակական-քաղաքական միջավայրը շնչում ու արտաշնչում է այս մտայնութեամբ, որն անկասկած խաբուսիկ է:*

*«ՀԵՏՔ»*

## ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ՈԳԵԿՈՉՈՒՄ

*Շարունակուած էջ 8-էն*

*պէս Ստեփան Սապահգիւլեան կ'ըսէ. «Տես եւ յիշիր, քո առաջ մենք այսօր էլ ենք, ինչ որ էինք երէկ, նոյն հարուածողը մենք մեր պատնէշի վրան էինք, այնտեղ էլ ենք: Մենք շարունակում ենք մեր պատմութիւնը»:*

*Պրն. Յակոբ Կիւլվարդեանի եւ Պրն. Անդրանիկ Արզուհաճեանի պարգեւատրումով վերջ գտնող այս փառաւոր հանդիսութիւնը լիցքաւորեց բոլոր ներկաները հայրենասիրութեամբ, ազգասիրութեամբ,վերանորոգելով հնչակեաններու ուխտը մնալու հաւատարիմ մայր կուսակցութեան Հնչակեան կուսակցութեան:*

*Հերոսները կը ծնին բայց երբեք չեն մեռնիր:*

www.massisweekly.com
updated every Friday

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*ՄԱՐԻԱՄ ԱՃԷՄԵԱՆԻ մահուան տխուր առիթով հանգուցեալի զաւակները եւ հարազատները իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն Ս.Դ.Հ.Կ. կեդրոնական Վարչութեան, Արեւմտեան Ամերիկայի Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմնին, «Մասիս» Շաբաթաթերթին, Նոր Սերունդ Մշակութային Միութեան եւ բոլոր անոնց որոնք անձամբ, գրութեամբ, հեռաձայնով, ծաղկեպսակով, կամ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց սուգին:*

*ԱՃԷՄԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*ՍԻՐՎԱՐԴ ՀԱՆՆԷՍԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ (մահացած Պէյրութ) Տէր եւ Տիկ. Յովհաննէս եւ Սօսի Հաննէսեան հետեւեալ նուիրատուութիւնները կը կատարեն.*

*«Մասիս» շաբաթաթերթի բարգաւաճման ֆոնտին՝ $200:*

*Հայաստանի «Բենիամին Ժամկոչեան» վարժարանին $100:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*ԼԻՍԻ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ մահուան տխուր առիթով Երեւանի «Բենիամին Ժամկոչեան» վարժարանին եղած են հետեւեալ նուիրատուութիւնները փոխան ծաղկեպսակի:*

*Տէր եւ Տիկ. Յովհաննէս Հաննէսեան $100:*

*«Շիրակաշէն» խմբակցութիւն $100:*

## ՊՈԷԶԻԱՆ ԿԵԱՆՔ Է ԴԱՌՆՈՒՄ

*Շարունակուածէջ 14-էն*

*կը պատրաստի իր իսկ կատարումով, ուր ասուած է՝ «Հեղինակի ձայնը զգացումների հետ միասին ունկնդրելու, որը գերագոյն հաճոյք է լինելու մեզ համար»: Յարգելի Փ. Քաուին արժանաւոր հեղինակութիւն է նկատում Ա. Յարութիւնեանին եւ իր ծանօթութիւնը եւ ճանաչողութիւնը սկսուած է համարում հրատարակուած գրքերի միջոցով ստեղծուած շփումների ճամբով: Նա նշեց, թէ՝ «Յարութիւնեանը հետազօտել է պրիթանական եւ ամերիկեան գրականութիւնները, որով արժանացել է դոկտորական կոչմանը«: Յարգելի զեկուցաբերը արժեւորելով նրա գիտական գործունէութիւնը եզրակացնում է՝«Գիտնական եւ թարգմանիչ բազմատաղանդ հեղինակը աւելի ծանօթ է որպէս բանաստեղծ...»: Պրոֆեսորը նիւթ դարձնելով հեղինակի նոր ժողովածուն բնութագրում է՝ » Նոր ժողովածուում հեղինակը այն առիթն է ընձեռում 20-րդ դարի պատմութեանը մօտենալ, եւ նոր դիտանկիւնից ներկայացնել այժմէական ընթերցողին... Այս հատորում Յարութիւնեանը հայթայթում է մեզ մի ամբողջ շարք պատկերներ եւ դա անդրադարձուած է ընդհանուր վերնագրի մէջ՝ «Հեռուստապոէմներ...»: Նա գրքին առնչուող մեկնաբանութեան հատուածում նշում է՝«Գիտնականը հանդէս է գալիս փիլիսոփայական վերլուծումներով, որոնց միջոցով յաճախակի փորձում է անիմաստ իրադարձութիւնները իմաստաւորել ընթերցողի համար, իսկ բանաստեղծը նոյնպէս կերպարանափոխւում է եւ իհարկէ գալիս է մարգարէական տեսիլքներով, երբեմն երազային, երբեմն մղձաւանջային... Յարութիւնեանը չի թաքցնում իր ըմբոստ, երբեմն խռովայոյզ տողորում, վերաբերմունքը աշխարհի կառավարիչների անխիղճ եւ սխալ գործունէութեան նկատմամբ...»: Յարգելի պրոֆեսորը իր գրութեան աւարտին խորհուրդ է տալիս ներկաներին՝ «վերցնել այս գիրքը, տանել տուն եւ ըմբոշխնել»: Պրոֆեսորը իր խորապէս ուսումնասիրած զեկոյցով Ա. Յարութիւնեանի գրականութեան ծալքերից երեւան բերեց բանաստեղծի, գրականագէտի, գիտնականի եւ թարգմանիչի բարձրօրէն գնահատելի ունակութիւնները:*

*Տաղանդաւոր երգչուհի Անահիտ Ներսիսեանը իր սոխակային ձայնով լսարանին երգով հաճոյք պատճառեց: Ինչպէս ամէն անգամ երգելիս այս անգամ էլ նա գնահատանքի բուռն ծափերի արժանացաւ իր երգած ժողովրդական նուրբ գեղգեղանքով երգի համար:*

*Կրկին անգամ մեր սիրելի եւ յարգելի Արտեմ Յարութիւնեանը բեմ հրաւիրուեց:*

*Նա շարունակեց բանաստեղծութիւններ կարդալ՝ ապրումով, այնպէս որ սրահը լուռ հետեւում էր ըմբոշխնելով նրա էութիւնից բխած՝ ցասումի, բողոքի, դատապարտութեան, պահանջատիրութեան, քաջագործութեան, հպարտանքի, նուաստացման, քամահրանքի, արգահատանքի, քննադատական բովանդակութեամբ, որոնք առնչւում էին Հայաստանի ցաւալի երեւոյթներին, Արցախի գոյամարտին առնչուող իրադարձութիւններին, Թուրքիայի իրագործած ցեղասպանութեան արհաւիրքների, Պաքուի եւ Սումկայիթի սպանութիւնների, Ուաշինկթոնում Արցախի ներկայացուցիչ եղած օրերի տպաւորութիւնների, հասարակական կեանքին կապուող ահաւոր արատների հետ:*

*Արդարեւ ունեցանք պոէզայի հոգեպարար երեկոյ: Հիւրասիրութեան ընթացքում մեծ գոհունակութեամբ մտքերի փոխանակութիւն էր գնում երեկոյի շուրջ:*

**Արտեմ Յարութիւնեանի ելոյթից պատառիկ պարբերութիւն:*

**«ՔԱՋ ՆԱԶԱՐ» ՌՒԴԻԴ ԵԹԵՐ ԾՕ**

**Ամէն Կիրակի Երեկոյեան**

**Ժամը 10:00-ից 12:30**

**Կլէնտէյլի 380-րդ կայանից**

## ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԲԱՆԱՎԷՃ

*Շարունակուածէջ 5-էն*

*համար անհրաժեշտ ձայների «ապահովման» ուղղութեամբ իշխանութիւնների ջանքերը: Ցանկութեան դէպքում ընտրութիւնները հնարաւոր է կեղծել իւրաքանչիւր ընտրակարգի դէպքում: Սակայն կեղծուած, բայց 100% համամասնական կարգով անցկացուած ընտրութիւններում ընդդիմադիրներին աւելի դիւրին կը լինի պայքար մղել խորհրդարանական մանդատներ ստանալու համար, քանզի չեն հանդիպի այնպիսի դիմադրութեան, ինչը լինում է մեծամասնական ընտրութիւնների ժամանակ:*

*Այս դէպքում ինչո՞ւ են ընդդիմադիր կուսակցութիւններն այսքան մեծ ուշադրութիւն դարձնում ընտրակարգի փոփոխութեան խնդրին: Ի դէպ, հետաքրքիր է, որ Ռուսաստանում, որտեղ գործում է 100% համամասնական ընտրակարգը, հակաիշխանական բողոքին համակրող բազմաթիւ փորձագէտներ ընտրակարգի վերաբերեալ իրենց հայ գործընկերներին հակառակ տեսակէտ են յայտնում: Օրինակ՝ Օքսֆորդի համալսարանի St. Antony College-ի դասախօս Վլադիմիր Պաստուխովը նշում է, որ Ռուսաստանում, որտեղ չկայ կուսակցական համակարգ, 100% համամասնական ընտրակարգին անցնելը «բացարձակ խելագարութիւն էր»:*

*Հայ ընդդիմադիրներն այս պահին, կարծես թէ, փորձում են լուծել կարճաժամկէտ խնդիր՝ հնարաւոր է, որ հարցը բարձրացնելով նրանք հիմնականում ցանկանում են ստանալ իշխանութիւնների վրայ յաւելեալ ճնշումներ գործադրելու նոր լծակներ, որոնք կարող են օգտագործուել նրանցից որոշակի մանդատներ «պոկելու» համար:*

*Եւ վերջում. ընտրակարգի փոփոխման խնդիրը դարձնելով սեփական օրակարգի գրեթէ հիմնական հարցը, ընդդիմութիւնն իրենից անկախ նպաստել է իշխանութիւնների հանդէպ եւրոչինովնիկների վերաբերմունքի մեղմանը: Սրա մասին են վկայում ԵԽԽՎ Մոնիթորինգի յանձնաժողովի Հայաստանի հարցով համազեկուցող լորդ Ջոն Պրեսկոտի հետեւեալ խօսքերը՝ «Չորս տարի առաջ իրավիճակը դաժան էր, հանդիպումների ժամանակ մարդիկ խօսում էին կեղծուած ընտրութիւնների, մարտիմէկեան իրադարձութիւնների վերաբերեալ, հիմա մթնոլորտը եւ ակնկալիքները փոխուել են, որն իսկապէս դրական երեւոյթ է»: Նա յաւելել է, որ «այս անգամ ընդդիմադիր քաղաքական ուժերին յուզող խնդիրը հիմնականում մեծամասնական ընտրակարգի վերացման էր վերաբերում»:*

## ՍԵՐՆԴԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ...

*Շարունակուածէջ 5-էն*

*«Հանրապետական» կուսակցութիւնից կազմուած կառավարութիւնն օրէնքները ուղարկում է ԱԺ, «Հանրապետական» կուսակցութիւնից կազմուած մեծամասնութիւնն ընդունում է այդ օրէնքները եւ «Հանրապետական» կուսակցութիւնից ընտրուած նախագահը վաւերացնում է դրանք: Ընդ որում «Հանրապետական» կուսակցութեան ընտրութիւններում արդար յաղթանակելը հասարակութեան մէջ խիստ կասկածելի է թւում: Ինչեւէ, չխորանալով դրա մէջ, պէտք է փաստեմ, որ թէեւ կանոնները եւրոպականացւում են, բայց դրանից ժողովրդի վարքագիծը չի փոխւում: Եւ հիմա մենք ունենք մի իրավիճակ, երբ կանոնների եւ ժողովրդի միջեւ առկայ է մի մեծ տարածութիւն, որը միանշանակօրէն չի բխում ժողովրդի էութիւնից:*

*Այդ տարածութիւնը դրսեւորւում է կեանքի բազմաթիւ ոլորտներում՝ սկսած հետիոտնային անցումներում կարմիր լոյսի տակով անցնող հետիոտների վարքագծից մինչեւ ընտրութիւններում կաշառք վերցնող ընտրողներից: Անարդարութիւնից անվերջ բողոքողներից, սակայն իր գործով դատաւորին, քննիչին, դատախազին կաշառք առաջարկողներից: Հայրենասիրութիւն քարոզողներից, սակայն բանակում մէկ օր չծառայածներից, դպրոցներում երեխաների ծնողներից գումար վերցնողներից մինչեւ ստրուկի հոգեբանութիւն ունեցող ծնողի կողմից գումար տալուն, միայն այն բանի համար, որ իր երեխայի գնահատականը բարձր լինի, անվերջ իշխանութիւնների վարած քաղաքականութիւնից բողոքողներ, սակայն երբեք որեւէ հանրահաւաքի չմասնակցածներից (էլ չեմ ասում իր հայեցակէտերի համար դատապարտուածների), քրիստոնէութիւնն առաջինն ընդունելու վերաբերեալ անվերջ խօսացող գլուխգովաններից, սակայն երբեք Աստուածաշունչ չկարդացածներից եւ այլն եւ այլն: Ցաւօք նմանատիպ վարքագիծ ունեցողները մեր իրականութիւնում դեռեւս շատ են եւ այդ պատճառով է, որ չի փոփոխւում կեանքի որակը, երբ այդ բալանսը կը փոփոխուի յօգուտ միւս թեւի, կեանքի որակի բարձրացումը անխուսափելի կը լինի:*

*Իրականում, երբ շփւում ես հասարակութեան տարբեր շերտերի հետ տեսնում ես, որ ժողովրդի գերակշռող մասի իրական վարքագիծը չի համապատասխանում ընդունուած կանոններին: Ասել կ'ուզի, մեծամասնութեան հասակը չափից աւելի նուազ է, որպէսզի կեանքում իրական որակական փոփոխութիւններ տեղի ունենան: Հաւատացէք, իշխանութիւններին պատուէր տուողը հենց նոյն այդ հասարակութիւնն է եւ եթէ իրական փոփոխութիւններ տեղի ունենան անձանց մտածելակերպում, ապա այդ հասարակութեանը չհամապատասխանող ցանկացած իշխանութիւն ժամերի ընթացքում դուրս կը թռչի իր տեղից: Բայց աւաղ, իմ խորին համոզմամբ, անձանց մտածելակերպում փոփոխութիւններ, որպէս կանոն, տեղի է ունենում միմիայն սերնդափոխութեան միջոցով եւ այս առումով թերեւս ժամանակ է հարկաւոր: Բայց մինչ այդ ժամանակը կը գայ պէտք է զգոյշ լինել ցանկացած կանոն գրելիս եւ պարտադիր հաշուի առնել սեփական ժողովրդի հասակը, եւ «Ընտանիք» չներմուծել այնպիսի կանոններ, որոնք չեն համապատասխանում այդ հասակին:*

*Ամփոփելով յօդուածս՝ պէտք է նշեմ, որ քանի դեռ հասարակութիւնում կան բազմաթիւ մարդիկ, ովքեր մեքենայի համընկնող համարանիշներին աստղաբաշխական գումարներ են տալիս, այդ հասարակարգում դեռեւս վաղ է եւրոպական կանոններ ներմուծելը, քանի որ Եւրոպայում վաղուց ի վեր մեծահարուստները հեծանիւ են վարում:*

## «ԱՋԳԱՆՈՒԻՐՈՒՄ»Ի ՅՈՒՆՈՒԱՐ ԱՄՍՈՒԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

*Շարունակուած էջ 7-էն*

*րուն մասին: Ապա, յայտագրի երկրորդ բաժինով USCի ուսանող եւ Ազգանուիրումի նախկին անդամ Արթին Մնայեանը աշակերտներուն խօսեցաւ իր ընտրած ճիւղին մասին եւ շինիչ տեղեկութիւններ փոխանցեց համալսարանական կեանքի եւ դասընթացքներուն մասին: Ան քաջալերեց աշակերտները իրենց նախընտրած մասնագիտութեան կողքին, երկրորդական մասնագիտութիւն մը՝ minor, ընտրեն, իրենց ապագայ ասպարէզի կարելիութեանց կարկինը ընդլայնելով: Նաեւ ան խրախուսեց գիրենք փոքր տարիքէն վարժողական ծրագիրներուն՝ internship, մասնակցելու տարբեր հաստատութիւններու եւ ընկերութիւններու մօտ, որպէսզի աւելի լաւ կարենան կողմնորոշուիլ:*

*Ապա խօսք առաւ Տիկին Քարինա Շաղմիրեանը, որ ներկայացուց իր բազմատաղանդ դուստրը՝ Սարինը եւ անոր արձանագրած յաջողութիւնները: Սարինը որ ներկայիս MIT համալսարանը կը յաճախէ, փոքր տարիքէն գիտական ճիւղերու մէջ բացառիկ կարողութիւններ ցուցաբերած է, եւ բազմիցս մասնակցած է գիտական մրցաշարքերու եւ նոյնիսկ «Intel»ի գիտական մրցաշարքին մէջ իբրեւ կիսաւարտական ընտրուած էր իր աշխատասիրութիւնը, որ քաղցկեղի բուժման կապակցութեամբ նորարութիւն մըն էր: Տիկին Շաղմիրեան իր տուած տեղեկութիւններով ներշնչեց եւ քաջալերեց ներկայ աշակերտներն ու ուսանողները որ յարատեւեն եւ չեշտեց որ յաջողելու առաջնահերթ պայմաններէն մէկը տոկալն եւ դիմանալն է բոլոր դժուարութիւններու, միշտ փորձելով ու մասնակցելով զանազան մրցոյթներու:*

*Սոյն հաւաքին նաեւ խօսք առաւ Eagle Scout տիտղոսին արժանացած ՀԲԸՄի սկաուտներէն Արման Սէօլէմէզեանը, որ վերջերս կայացած Rose Bowl Parade-ին մասնակցած էր. ան ըսաւ, որ մեծ պարծանք մըն էր իրեն սահմանուած այս առիթը, ուր միայն Eagle Scout տիտղոսը ունեցող սկաուտները կ՚արժանանան մասնակցելու: Արմանը խրախուսեց աշակերտաշակերտուհիները, անոնք որոնք սկաուտական շարքերու անդամներ են, որ անպայման փորձեն տիրանալ բարձր տիտղոսներու սկաուտութեան մէջ, որոնց համար պայման է, որ բարեսիրական աշխատանք մը կատարեն: Արմանին պարագային, ան իր վարժարանին՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ա. եւ Մ. Յովսէփեան վարժարանին մանկապարտէզին խաղավայրը նորոգած էր, վերաշինելով տախտակէ տնիկը, ներկելով եւ գծելով պատերն ու նստարանները: Արմանը փոխանցեց, որ շատ հաճելի է սիրելի դպրոցի կամ այլ հաստատութեան մը համար նմանօրինակ աշխատանքներ ամբողջացնելը եւ անոր փոխարէն տիրանալը բարձր տիտղոսի մը: Ազգանուիրումի յանձնախումբին մաս կազմող, Տիկին Վարդենի Երճանեանը, որ իր պատանեկան տարիներէն մինչեւ այսօր մաս կազմած է միջազգային սկաուտական կազմակերպութեան, ներկաներուն ուշադրութեան յանձնեց, որ համալսարան դիմելու եւ ընդունուելու նախնական քայլերուն եւ հարցաքննութիւններուն ընթացքին, բարձր նիշերու կողքին, համալսարանի պատկան մարմինները նկատի կ՚ունենան այս ուսանողին արտա-դասարանային իրագործած աշխատանքները: Առ այդ, ան յանձնարարեց սկաուտական կազմակերպութեանց անդամ բոլոր աշակերտները, որ անպայման նախաձեռնեն տիրանալու Eagle Scout եւ այլ տիտղոսներուն, իրենց գաղութէն ներս կատարելով բարենպաստ աշխատանքներ:*

*Այս հաւաքին աշակերտներէն իւրաքանչիւր, հետեւելով վերոյիշեալ Մարթին Լուտեր Քինկին եւ Հրանդ Տինքի օրինակներուն, արտայայտեց իր կեանքին ընթացքին իրագործելիք երազները եւ ծրագիրները, խորհրդակցելով եւ կարծիքներ փոխանակելով, թէ ինչպէս կարելի կրնայ ըլլալ զանոնք իրականացնելը:*

*Ապա, խօսք առաւ Դոկտ. Սիլվա Գարայեանը, որ շնորհակալութիւն յայտնեց ներկայ աշակերտներուն, ծնողներուն, հաւաքին ընթացքին խօսք առնողներուն, ինչպէս նաեւ Ազգանուիրումի յանձնախումբի բոլոր անդամներուն:*

*Ազգանուիրումի յաջորդ հանդիպումը տեղի պիտի ունենայ, Շաբաթ Փետրուար 11, ժամը 10:30ին Փասատինայի ՀԲԸՄ կեդրոնէն ներս: Սոյն հաւաքներուն կրնան մասնակցիլ Ե. կարգէն սկսեալ բոլոր աշակերտներ-աշակերտուհիները: Յաջորդ հանդիպման ընթացքին պիտի փոխանցուին կարեւոր գիտելիքներ, Բարեկենդանին, Վարդանանցին եւ Սուրբ Սարգիսի մասին:*

*Հետաքրքրուողներէն կը խնդրուի կապ պահել հետեւեալ անձերուն հետ՝ Օր. Լորա Գուլումճեան, Տիկ. Լիզա Մանոյեան, Տիկ. Վարդենի Երճանեան, Տիկ. Սեւան Տէր Պետրոսեանը:*

*ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ «ԱԶԳԱՆՈՒԻՐՈՒՄ»ԷՆ*


**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱՁԱՅՆԵԼ**

**(626) 797-7680**


## ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 500-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

*Շարունակուած էջ 7-էն*

*տպագրութեան պատմութիւնը՝ սկսելով 1512 թուականէն՝ երբ Յակոբ Մեղապարտ Վենետիկի մէջ կը հրատարակէր տպագիր առաջին հայ գիրքը՝ «Պարզատումարը»: Առանց օրուան գլխաւոր բանախօսին նիւթին անդրադառնալու, ան ըսաւ թէ Իտալիայէն ետք հայ տպագրութիւնը մուտք գործած էր Պոլիս 1567-ին եւ ապա՝ զանազան երկիրներ ու հասած Շուշի (Հայաստան) 1772-ին: Իսկ առաջին հայ պարբերական մամուլի թիւը լոյս տեսած էր Հնդկաստանի մէջ 1794-ին, Յարութիւն Քհնյ. Շմաւոնեանի նախաձեռնութեամբ:*

*Օրուան հանդիսավարը երջանկութիւն յայտնեց որ այս տարի Հայաստանը Եւրոպայի գիրքի մայրաքաղաք հռչակուած է, եւ այնուհետեւ ներկայացուց օրուան գլխաւոր բանախօսը՝ Զաքարիա Միլտանօղլուն: Միլտանօղլու ասպարէզով ճարտարագէտ է եւ Պոլսոյ Պատրիարքարանի կողմէ վերահսկած է Ախթամարի Ս. Խաչ եւ Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցիներու վերանորոգման աշխատանքներուն:*

*Երկար տարիներէ ի վեր Միլտանօղլուն լծուած է լուրջ աշխատանքի մը՝ ուսումնասիրելով հայ մամուլը ընդհանրապէս եւ Օսմանեան տարիներու մամուլը մասնաւորապէս: Գրեթէ պատրաստ է արդէն «Պատմութիւն Հայ Մամուլի, սկիզբէն մինչեւ մեր օրերը» երկասիրութիւնը, որ անկասկած պիտի ըլլայ կոթողային, օգտակար եւ ուսանելի ազգագրական գործ մը, այլապէս հարուստ մեր ժառանգութեան աւելցնելով նոր հարստութիւն մը:*

*Միլտանօղլու տեսաերիզով մէկ առ մէկ ներկայացուց մեր մամուլի կողքերը՝ տալով իւրաքանչիւրին մասին կարճ ու դիպուկ բացատրութիւններ: Զանազան տեսակի մեր թերթերը ան բաժնած էր մասերու, ինչպէս՝ գրական, քաղաքական, կուսակցական, բժշկական, ուսանողական, երգիծական, հայրենակցական, գաւառական եւ այլ օրաթերթեր, շաբաթաթերթեր, ամսաթերթեր եւ պարբերականներ: Իւրաքանչիւր բնագաւառէն յատկանշական թերթերու ցուցադրութիւնը մեծապէս տպաւորեց ներկաները, մանաւա՛նդ երբ անոնք ծանօթ անուններ էին մեր ազգային կեանքէն ներս. «Մասիս», «Արեւելք», «Ժողովուրդի Ձայն», «Բիւզանդիոն», «Ապագայ»:*

*Յարգելի բանախօսը անդրադարձաւ թրքատառ հայ մամուլին մասին եւ որպէս օրինակ ըսաւ որ Տիրան Քելեկեանի խմբագրած թերթի խմբագրականը առանց կարդալու օրուան սուլթանը՝ Համիտ Բ. գրասենեակ չէր երթար: Ան ներկայացուց հայատառ բայց թրքերէն լեզուով մեր մամուլը, որ կը համնէր գաւառի եւ Կիլիկիոյ թրքախօս հայութեան: Իւրաքանչիւր մամուլի ներկայացման հետ յիշուեցաւ նաեւ պատկան թերթի խմբագիրներուն անունները: Նաեւ, ի յայտ եկաւ, որ ազգային կուսակցական մամուլը ունեցած է ընդարձակ տարածում թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառի մէջ: Անոնցմէ առաջինը եղած է ազգային պահպանողականութեան ի պաշտպանութիւն Խրիմեան Հայրիկի «Արծուի Վասպուրական»ը եւ ապա Փորթուգալեանի «Արմէնիա»ն:*

*Իր խօսքի եզրափակումին՝ օրուան բանախօսը յայտնեց որ վերջերս Թուրք գոհուած լրագրողներու ցանկին վրայ, որպէս յարգանքի արտայայտութիւն, շնորհիւ այսօրուան պոլսահայ մեր մտաւորականներու ճնշումին՝ աւելցուցած են երկու թրքահայ ուշագրաւ անունները Գրիգոր Զոհրապի եւ Տիրան Քելեկեանի. երկուքն ալ զոհ Ցեղասպանութեան: Աւելի քան 250 թերթերէ՝ այսօր Թուրքիոյ մէջ մնացած են միայն հինգը՝ հարիւրամեայ «Ժամանակ»ն ու «Մարմարա» օրաթերթերը, «Ակօս» շաբաթաթերթը եւ Ս. Փրկիչ ու Ս. Յակոբ հիւանդանոցներու պարբերականները:*

*Քաղաքիս ծանօթ հնագէտ եւ հնավաճառ ազգայիններէն Տիար Գրիգոր Մարգարեան բերած էր հնատիպ հինգ գիրքեր Հայաստանի եւ Կիլիկիոյ շրջաններէն հաւաքուած եւ այս առթիւ զանոնք ներկայացուց հանդիսականներուն, որոնք մեծ հետաքրքրութեամբ լսեցին իւրաքանչիւր գիրքի մասին տրուած տեղեկութիւնները:*

*Հուսկ, փակման խօսքը ընելու հրաւիրուեցաւ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան: Ան իր ուրախութիւնը յայտնեց որ Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի Առաջնորդարանի հովանիին ներքեւ, մասնակցութեամբ շրջանի Պոլսահայ միութիւններու եւ Թէքէեան ու Համազգային մշակութային միութիւններու, կը շարունակուի գեղեցիկ աւանդութիւնը գրական ու մշակութային ձեռնարկներ կազմակերպելու: Անցեալին նոյնպիսի ձեռնարկ մը կազմակերպուած էր հայ լրագրութեան 300-ամեակին առիթով: Այս չափանիշով ձեռնարկները ապացոյցն են մեր գիրին, գրականութեան, մշակոյթին եւ մանաւանդ մեր ազգային ինքնութեան հանդէպ մեր ցուցաբերած մեծ յարգանքին: Մեր պարտականութիւնն է այս զգացումը փոխանցել մեր նոր սերունդին՝ որպէսզի անխափան կերպով շարունակուի նախաձեռնուած աւանդութիւնը: Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչ մարմիններուն, բացման խօսք կատարող Տիար Արթօ Խրիմեանին, օրուան հանդիսվար Տիար Յակոբ Վարդիվառեանին եւ գլխաւոր բանախօս Տիար Զաքարիա Միլտանօղլուի, որ նախ քան Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանը մեկնիլը՝ Պոլսոյ Ս. Խաչ Դպրեվանքին մէջ իր դասընկերը եղած է: Ապա, անդրադարձաւ Հայաստանի մեր ժողովուրդի գրքասիրութեան եւ ընթերցասիրութեան մասին, չեշտեց հայ մամուլի կատարած դերը որպէս ցրուած հայութիւնը շաղկապող ամուր օղակ՝ մանաւանդ սփիւռքի տարածքին:*

*Առաջնորդ Սրբազան Հօր փակման խօսքէն ետք՝ ներկաները հարցումներ ուղղեցին Տիար Զաքարիա Միլտանօղլուի եւ Տիար Գրիգոր Մարգարեանի:*


